

Lury
91
774

292

2009

393



Лиц
774 32

393

ՀԱՅԹԻ

ՏԱՐԱՎՈՅՑ ԱՅՖ

1010
4/384



111

ԹԻՓԼԻԶ
Տպարան Մ. Շարադզե և Կ^ո.
Ник. ул. № 21.
1895

Ա15841

ДОВІДКА

ФАНДЕМІЯ

СУЖИЦІЇ

Дозволено цензурою. Тифлісъ 31-го іюля 1895 г.



444-2009

1895

ԳԵՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Այժմ ինչ որ խօսենք, ինչ որ գրենք, —այդ կըզառ-նայ, որպէս երոպացին ասում է՝ «Ընթրիքից յետոյ մա-նանեխ», և կամ որպէս մենք ասիացիքս ասում ենք՝ «Կալ-սահնիքից յետոյ զուռնա», —մեր խօսքը տարածամ կըլինի:

Անցեալ պատերազմի սկզբից մեզանից շատերը յոյս ունեին, թէ տաճկական Հայաստանը զուրկ չի մնալ այն արտօնութիւններից և այն իրաւունքների մէկից, որոնց համար պատերազմը հրատարակուեցաւ, և որոնք պէտք է տրուէին Թիւրքիայի լծի տած ճնշուած քրիստոնեանե-րին։ Իսկ այժմ զորդից երեսմ է, թէ հայերի վիճակը ոչինչ փոփոխութիւն չի կրելու. —շատ-շատ տաճկական Հայաստանի ռուսաց զօրքերով զրաւուած մասը կըմիա-նայ Կովկասի հետ, բայց մնացած մեծ մասը դարձեալ կըմնայ թիւրքերի ձեռքում, գուցէ մի քանի խոստմունք-ներով, որպէս միշտ եղել են մինչև այսօր և միշտ մը-նացել են որպէս մեռեալ տառ...»

Ինչու հայերի վրայ ուշագրութիւն չդարձըն. մի-
թէ նրանց գարերով թափած արինը, արտասուքը և
մահմեղականներից կրած բարբարոսութիւններն իրաւունք
չէին տալիս, որ նրանք ևս արժանանային Եկոպայի գը-
թութեանը — թէ հայերն էլ դժբախտ են և գտնվում են
աւելի սարսափելի դրութեան մէջ, քան թէ սլաւոնական

ցեղերը Բալկանի թելակղղում։ Ահա մի հարց, որ պարզել պէտք է։

Նայելով ընդհանուր մարդասիրական կէտից և բրիստոնէական եղբայրասիրութեան զգացմամբ, պէտք է որ հայերի վրայ ևս ուշադրութիւն դարձնէին։ Խոկքաղաքականութեան կէտից նայելով, ոչ ոք պարտական չէր հայերի համար մտածել, քանի որ իրանք հայերը անշարժ մնացին և իրանց համար չմտածեցին։

Գերեզմանների վրայ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում, որովհետև նրանք լուռ են, գոհ են իրանց վիճակից։ Այնպէս էլ մէկը պարտական չէ ուրիշի փորի համար հոգալ, քանի որ նա չէ յայտնում, թէ ինքը քաղցած է...։

Այսու ամենայնիւ հայերի վրայ ուշադրութիւն դարձին, հայերի վրայ խօսեցին, և մինչև անզամ հայերին որդեցին, որ իրանք էլ խօսեն, իրանք էլ բողոք քարձրացնեն։ բայց հայերը միշտ լուռ մնացին։

Հայերի լուռութիւնը երկու բանով կարելի է մեկնել, կամ նրանք գոհ են իրանց վիճակից, և կամ չեն հասկանում իրանց որութիւնը, իրանց ինչ վիճակի մէջ լինելը։

2է կարելի մտածել, թէ հայերը գոհ են իրանց վիճակից, որովհետև անկարելի է գոհ լինել մի այնպիսի վիճակից, ուր կեանքի, գոյքի և ընտանիքի ապահովութիւն չկայ, ուր մարդու աշխատութեան արդիւնքը յափշտակվում է բռնի ձեռքով, ուր նրա պատիւը չների հետ է հաւասարուած, ուր ամեն ինչ, որ նրա համար սուրբ է և նուիրական, հաղածվում է, պղծվում է և կոյր մոլեսանդութեան գոհ դառնում։ Անկարելի է գոհ լի-

նել մի այդպիսի վիճակից։ Մարդ պէտք է բոլորովին դուրկ լինի զգացողութիւնից, որ չհասկանայ մի այդպիսի դրութեան սարսափելի դառնութիւնը. բայց մենք Թիւրքիայի հայերին այդ աստիճան մեռելութեան մէջ չենք դնի։

Մեր երկրորդ կարծիքը, թէ նրանք չեն հասկանում իրանց դրութիւնը, ինքն ըստ ինքեան լուծվում է առաջինի մէջ, այսինքն՝ եթէ գոհ չեն, ուրեմն հասկանում են իրանց վիճակը. եթէ չհասկանային, կատարեալ դիակներ կըլինէին, որոնց այրում են, մոխիր են դարձնում, բայց նրանք ոչինչ չեն զգում...։

Եյժմ ծագում է մի նոր հարց. ինչու բողոք չբարձրացրին, եթէ գոհ չեն իրանց վիճակից։

Բողորը կարող է յայտնուել երկու կերպով. կամ իրանք էլ սլաւնական ցեղերի նման պէտք է զէնք վեր առնէին և փոխանակ իրանց տան ծածկի տակ քրդերի սրից կոտորուելու, պատերազմի գաշտում մեռնէին, և կամ զրաւը կերպով իրանց բողորը յայտնէին, ուր որ հարկն էր։ Սոազին գործողութեան մէջ նրանք անընդունակ էին, իսկ երկրորդը ոչ ոք չէր արգելում։

Բայց ով պէտք է տար գրաւոր բողորներ։ Յայտնի բան է տաճկահայք՝ Աղբակայ հայերը, —որոնց 24 գիւղերը մոխիր դարձան, քահանաները ձողերի վրայ բարձրացան, կոտորուեցան, զարդուեցան, և կանալք ու աղջիկները Զէլալէդգինի և Ջէլս-Իրադուլլայի զօրքերի ձեռքով վերի գնացին, — Աղբակայ ողորմելի հայերը, որ այժմ Պարսկաստանում մուրացկանութեամբ են ապրում, ընդունակ չէին բողոք բարձրացնելու։ Նոյնը չէին կարող անել և Վանայ հայերը, որոնց հրդեհած քաղաքի ծուխը գեռ ևս բարձրանում է բազմաթիւ անբախտացած ընտանիքների սրտերից...։ Նոյնը չէին կարող անել և Բայազէդի ու Ալաշկերտի հայերը, որոնց վիճակն ամենիս յայտնի է։ Այլև չեմ խօ-

սում Մուշի, Բաղէշի, Տիգրանակերտի և տաճկական Հայ-
տառանի ուրիշ շատ հայերի մասին, որոնց ոչ մէջն ա-
զատ շմնաց մահմեդականների բարբարոսութիւններից...:

Ուրեմն նվ պիտի խօսէր, նվ պիտի բողոք բարձ-
րացնէր:

Այդ լինում է երկու կերպով: Երբ մի ժողովուրդ այն-
քան զարգացած է, որ հասկանում է իւր իրաւունքները,
և հասկանում է, որ ինքը բռնաբարփում է, և միևնուն
ժամանակ այնքան պատրաստուած է, որ կարող է ընդ-
դիմադրել բռնակալի կամայականութեանը,—ժողովուրդն
ինքն է բողոք բարձրացնում թէ զէնքով և թէ խօս-
քով: Այդ լինում է յեղափոխական ցոյցերով, և դրան ա-
սում ենք, թէ ազատութեան զգացմունքն արմատիցն է
ծագում, ամբոխի սրտիցն է բղխում—ցածից դէպի վեր
է քարօնանում:

Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ և գտնվում է
մի այնպիսի հիւանդոտ դրութեան մէջ, որ միայն զգում
է իւր ցաւերը, բայց դարման տանիլու շնորհ չունի,
այն ժամանակ նրան իւր թշուառ վիճակից ազատելու
հոգը վերեւից դէպի ցած է իջնում: Դա յայտնվում է
բարձր կենդրոններում, մայրաքաղաքներում, ուր գտնվում
են ժողովրդի աւելի զարգացած և գործունեայ գասերը:
Ամբոխը ենթարկվում է այդ դասերին և կրաւորական գեր
է խաղում:

Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը՝ ներ-
գործական:

Թիւրքիայի հայերի վերաբերութեամբ զլսաւոր կեն-
դրոնը, որտեղից պէտք է յայտնուէր բողոքը, Կ. Պօլիսն

է: Այնտեղ է դրած Հայոց Պատրիարքի աթոռը, այնտեղ
է գտնվում Ազգային Ժողովը և այնտեղ են լինում մտա-
ծող ու բանիմաց զլուխները:

Բայց ինչ է պատճառը, որ Կ. Պօլսից ևս ոչինչ բո-
ղոք չյայտնուեցաւ:

Այդ հարցը պարզելու համար մենք ստիպուած ենք
փոքր ինչ խօսել այն բանի վրայ, թէ նրախիսի անձնաւո-
րութիւններից են բաղկացած Կ. Պօլսում այն մարդիկը,
որ կոչվում են զործիշներ, առաջադէմ մարդիկ և պազի
սանձը կառավարող մարդիկ:

Ի բաց առեալ ամբոխը, որ բաղկացած է վաճա-
ռականներից, արհեստաւորներից և գաղթական մշակնե-
րից, Կ. Պօլսում զլսաւորապէս երկու գործող կուսակ-
ցութիւն կայ. մէկը հին՝ ամիրայական կուսակցու-
թիւն, միւսը՝ նոր սերունդը: Դրանք մի ժամանակ, այ-
սինքն Ազգային Սահմանագրութեան հիմնուելու սկզբնե-
րում խաւարեալների և լուսաւորեալների անուն էին
կրում:

Քննենք իւրաքանչիւր կուսակցութիւնը առանձին:
Նախ և առաջ պէտք է հասկանալ, թէ նրտեղից ա-
ռաջ եկան ամիրաները և ինչ էին դրանք:

Դեռ մեզնից կէս դար առաջ Թիւրքիայի պետու-
թիւնը գաւառների (վիլայէթների կամ սանջակների) կա-
ռավարութեան մէջ այն ձեն էր բռնած, որ իւրաքանչիւր
գաւառի արքունի տուրքը տալիս էր կապալով մի փա-
շայի: Եւ որովհետև կառավարութիւնը փստահութիւն
չունէր, թէ փաշան իւր ժամանակին կըհասցնէ զանձա-
րանին հարկերի նշանակեալ քանակութիւնը, այդ պատ-

ճառով փաշան ստիպուած էր իւր կողմից ներկայացնել Դուանը մի երաշխաւոր։ Այս երաշխաւորութիւնը յանձն էին առնուամ հայ սառաջները (սեղանաւորներ)։ Դրանք մի տեսակ ընկերներ էին կապալառու փաշայի հետ, որ միևնուն ժամանակ իւր գաւառի թէ դատաւորը և թէ վարձակալն էր։

Փաշան վարփում էր իրան յանձնուած գաւառի ժողովրդի հետ, որպէս ամեն մի կապալառու—կողովտում էր, յափշտակում էր և ամեն տեսակ հարստահարութիւններով մաշում էր նրանց։ Նա իւր կողովուարը, որ մեծ մասամբ յափշտակուած էր լինում ողորմելի հայերից, ուղարկում էր իւր երաշխաւորին՝ հայ սեղանաւորին, իսկ վերջնս պէտք է ներկայացնէր Բարձրագոյն Դուանը։

Բայց հայ սեղանաւորը ունէր իւր առանձին հաշիւները Դուան հետ, սկսեալ սուլթանի հարէմի ծախսերից մինչև զօրքերի կառավարութեան այլ և այլ պէտքերի ծախսերը նրանց ձեռքումն էին։ Եւ այդ պատճառով երաշխաւոր սեղանաւորը՝ իւր երաշխաւորութեան վրայ առած փաշայի պարագերի փոխարէն շատ անզամ զուտ փող չէր ներկայացնում գանձարանին, այլ տալիս էր միայն ստացականներ իւր հին պահանջների մասին, որ ունէր Դունից։

Դրամական այս տեսակ շրջանառութիւնները՝ թէ Դուան և թէ կառավարութեան նշանաւոր գործավարների հետ, տալիս էր հայ սեղանաւորին մեծամեծ շահեր, և այս շահերն այնքան աւելի առատ էին լինում, որքան բղխում էին անմաքուր և պղտոր աղբիւրներից... *)։

*) Հայոց դրամատէրերը իրանց գումարները մի այդպիսի կեղտու շրջանառութեան մէջ դնելով, հեռու մնացին աղասիաճառականութիւնից, և այս ասպարէզը մնաց յոյների ձեռ-

Անդադար Դուան հետ հաշիւներ ու յարաբերութիւններ ունենալով,—ահա այդ կապալառու սառաջները, այդ հայի անուանը նախատինք բերող վաշխառու հրէաներն էին, որ արժանացան ամիրայութեան պատուանունի...։

Որպէս Դուան մերձաւորներ, ամիրաները մեծ աղդեցութիւն ունէին ազգային գործերի վրայ. համարեա ամեն գործ կախումն ունէր նրանց կամայականութիւնից։ Ամիրայի մի լոկ խօսքը օրէնք էր, նրա հրամանները կատարվում էին ժողովրդի կողմից ամենայն հնագանդութեամբ։

Ամիրաներն իրաւունքներ էին բանեցնում ոչ միայն Կ. Պօլսում, այլ և գաւառներում։ Արդէն ընթերցողը տեսաւ թէ ինչ կապ ունէին նրանք գաւառները կառավարող փաշաների հետ, որոնց ձեռքով և ամեն բանի մէջ խառնում էին։

Ցայտնի բան է՝ այն իրաւունքները, որ նրանք բանեցնում էին, պաշտօնապէս չէր տրուածնրանց, այլ գործում էին որպէս մարդիկ, որ օգուտ քաղել գիտեն ժամանակի հանգամանքներից. այդպիսով կառավարութեան ընդհանուր անկարգութեան մէջ հանդիսանում էին որպէս մի մի բռնականներ, թէն իրանց բռնակալութիւնը կարող էին գործ դնել գէպի իրանց ողորմելի ազգայինները միայն, իսկ գէպի օտարազգիք նոյնքան ցած էին և գետնաքարը։

Եղել են բացառութիւններ, որ ամիրանների մէջ գտնուել են բարի և աղգասէր մարդիկ, բայց եթէ խիստ քում, Օրովհետև յոյները Դուան վստահութիւնը գրաւած չլինելով, չկարողացան նրա հետ դրամական հաշիւների մէջ մտնել, կամ հայերի հետ մրցութիւն անել, որոնք իրանց վարմունքով կարողացել էին հրապուրել Թիւրքերին։

քննելու լինինք, հազիւ թէ այդ լաւ համարուածները և ազատ մնան արատներից:

Կ. Պօլսի պատրիարքը, որպէս ժողովրդի վրուի և ներկայացուցիչ, միշտ կախումն է ունեցել ամիրաներից և սերտ կերպով կապուած է եղել նրանց հետ, նրանք վարուել են որպէս սանիկ և սանահայր, որովհետեւ երկուսի շահերն էլ համաձայն լծորդութիւն էին պահանջում: Պատրիարքը կարօտութիւն ունէր ամիրաների մէջ, որովհետեւ իւր յարաբերութիւնները Դռան հետ նրանց ձեռքով պէտք է պահպանէր: Եւ այս պատճառով ամիրաները պատրիարքարանի մէջ միշտ բարձր ձայներ էին վայելում: Եւ պատրիարքը իւր դիրքը պահպանել չէր կարող, եթէ ամիրաների հետ համակից չլինէր:

Փոխուելով Թիւրքիայի վարչութեան ձեւերը, սառափները կորցրին իրանց նշանակութիւնը, բայց ամի, բայութիւնը մնաց, թէ ուրիշ կերպարանքով: Ամիրաները, որոնց աւելացան և էֆէնդիները, իրանց հին յարաբերութեանց առիթով ծանօթացած լինելով Դռան թուլութիւնների հետ, կարողացան զանազան պաշտօններ ստանձնել և ամեն գործի մէջ ցոյց տալ մեծ յառաջադիմութիւն: Այս պաշտօնականներն ըստ մեծի մասին հին սառափների և կապալառուների որդիք լինելով, ահադին հարստութեան հետ ժառանգել էին և իրանց նախահարց բնաւորութիւնը՝ թէ ինչով կարելի է հաճոյանալ կառավարութեանը և նրա գործերի մէջ մտնել:

Դռւոը անազիւ գործիրներ էր որոնում, և նրա նպատակներին կատարելավէս համապատասխանում էին հայծառայողները...: Յոյները հայերի հետ՝ տէրութեան պաշտօնների վերաբերութեամբ մրցութիւն անել չկարողացան, որովհետեւ նրանք հայերի նման չէին և չէին կարող կեղառու գործիք դառնալ: Թէ շատերը ու-

թիշ կերպով են մեկնում. որպէս թէ յոյները չէին վայելում կառավարութեան վստահութիւնը, իսկ հայերը իրանց հաւատարմութեամբ արժանացած էին Դռան առանձին համակրութեանը: Այդ իրաւ է, միայն պէտք է հասկանալ, թէ ինչ է նշանակում հաւատարմութիւն պաշտօնի մէջ դէպի մի անկարգ կառավարութիւն, որ արտարին խտփուսիկ ձեերի տակ միշտ իւր հպատակների արիմն է ծծում: Մի այդպիսի հաւատարմութիւն նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ մի խումբ աւազակների հաւատարմութիւնը դէպի իրանց խմբապետք կամ գլխաւորը:

Այժմ կարծեմ ընթերցողին հասկանալի եղաւ, թէ ինչ տեսակ անձինքներից է բաղկացած Կ. Պօլսում այն կուսակցութիւնը, որ մնաք իւր հին անունով կոչեցինք ամիրաների կուսակցութիւն: Մի կարգ մարդիկ, որ անունով միայն հայ են, իսկ սրտով թուրքից աւելի թուրք, որոնք իրանց անձնական շահերը պահպանելու համար, յայտնի բան է, կըցանկանային միշտ կանգուն տեսնել Թիւրքիան իւր կառավարութեան այժմեան անկարգ այլանգակութեան մէջ: Եւ այդ տեսակ մարդկանցից, հասկանալի է, որ չէր կարելի սպասել, թէ նրանք բողոք բարձրացնէին և հայ ժողովրդի հառաջանքներին թարգման լինէին:

Դառնանք դէպի միւս կուսակցութիւնները:

Կ. Պօլսում կայ և մի ոռւսական կուսակցութիւն, որ մեր նկարագրած կուսակցութեան հակակշիռն է կադմում: Այս կուսակցութիւնն աւելի զօրութիւն ստացաւ Իդնատիելի գեսպանութեան օրերում: Նրանք մտածում են, եթէ հայերը կարող են ազատուել Թիւրքիայի հարստահարութիւններից, այդ կարող է լինել միայն ոռւսների պաշտպանութեամբ, և իրանց փրկութիւնը որոնում են միայն ոռւսաց դրօշի տակ, ցանկանալով կամ տաճ-

կական չայաստանը Կովկասի հետ միացած տեսնել և կամ
Թիւրքիայի հպատակ մշալով, Թուսաստանի հովանաւ-
բաւթիւնը վայելել:

Թէ մինչև որ աստիճան ճիշտ են այս կուսակցութեան ակնկալութիւնները, մենք աւելորդ ենք համարում քննել, միայն կ'ասենք, որ նա ունի իւր ընդդիմակալ մի ուրիշ կուսակցութիւն, որ հակակիր է դէպի Ռուսաստանը։ Եյս հակակրութիւնն առաջ եկաւ Ալի և Փուագ փաշաների ազդեցութիւնից հայերի վրայ, և մասսամբ Նապօլէօնի քաղաքականութիւնից Թիւրքիայում, որի հետևանքը եղաւ անջատել Տաճկաստանի հայերին Ռուսաստանի հայերից և նրանց ներքին կապը խզել։ Որովհետեւ Նրանք սկսեցին համարել Ռուսաստանի հայերին կորած, ուստի ամեն վստահութիւն կորցնելով դէպի իրանց ազգայինները, մտածեցին աշխատել, որ վիճակակից շինին նրանց դրութեանը *): Եւ այս տեսակ կարծիքից Ռուսաստանի հայերի վերաբերութեամբ՝ առաջ եկաւ այն, որ նրանք սկսեցին աւելի սերտ կերպով կապուել Թիւրքիայի հետ և իրանց բարորութիւնը նրանից սպասել։

Այս վերջին կուսակցութիւնը նրանով է միայն զանգանվում բռն թիւրքասէցնելից (տէրութեան հայ պաշտ տօնականերից), որ դրանք սրտով ատում են թուրքերին, դժգոհ են գէպի նրա բարբարոսութիւնները, միայն մը տածում են, թէ բոլոր անկարգութիւնները ժամանակաւոր են, թէ հայոց աղղը համբերելով, կարող է հասնել մի բախտաւոր ապագայի, երբ թիւրքերը կըքաղաքակըրթ-

*) Կ. Պօլսում դեռ պատերազմից առաջ հրատարակուած
 «Շահէնն ի Սիրիք» կոչուած գիրքը կատարեալ արտայայտութիւն
 է յիշեալ կուսակցութեան, Մենք ուրիշ ժամանակ առիթ կու-
 նենանք խօսել այդ գրքի մասին:

ուեն և Տաճկաստանի ընդհանուր հպատակների վրայ կրտիրէ աղատ իրաւունքն ու արդարութիւնը...:
Մեր նկարագրած երեք կուսակցութիւններից երեւաց, որ առաջինը, այսինքն թիւրքաց պաշտօնների մէջ ծառայողները, ճիշտ կատարում է այն առածի իմաստը, թէ «ում հացը որ ուտում են, նրա շահերի համար էլ հաշում են»: Այդպիսի մարդկիկ անձնական շահեր միայն ունին, ընդհանուր, ազգային շահը անհասկանալի է ուղանց: Երկրորդ կուսակցութիւնը ամեն ինչ ուուներից է սպասում: Իսկ երրորդը ոչ միայն ուուններից ակնկալութիւն չունի, այլ մտածելով թէ ամեն մի քրիստոնեայ պետութիւն «իւր հօր հոգու համար» դէպի հայերը օգնութեան ձեռք չլինեն, — այս կուսակցութիւնը աւելի սերտ կերպով կպած է Թիւրքիային, հայ ժողովրդի ապագայ բախտաւորութիւնը թիւրքերի քաղաքակրթութեան մէջ որոնելով:

Բայց կայ մի ուրիշ կուսակցութիւն և՛ նոր սերունդը, որ մի ժամանակ լուսաւորեալների անուն էր կրում։ Այս կուսակցութիւնը Պ. Պօլտի մտածող գասիթարմ ոյժն է կազմում։ Բայց որպէս առհասարակ լինում է, երբ տակաւին հների ազգեցութիւնը առաջնակարգ դեր է խաղում, այսպէս էլ նոր սերունդը դեռ ևս իւր տկար և անորոշ դրութեան մէջն է, դեռ ևս մի կազմակերպուած ձև չէ ստացել, այդ պատճառով սիսալ կը լինի ասել, թէ նրանք կուսակցութիւն են կազմում։ Թը բանց չէ յաջողուել մինչեւ այսօր բարձր դիրքի վրայ կանգնել, թէ ազգային և թէ պետութեան մեծ վործերի մէջ մտնել, որպէսզի սրտի և մտածութեան հետ միա-

նար նըանց մէջ և իշխանութիւնը, սրով կարողանային աւելի ազդու կերպով ներգործել:

Դրանք առհասարակ նիւթական կողմից աղքատ, իսկ բարոյապէս և մտաւրական կողմից հարուստ մարդիկ են, դրանք գեռ ևս գեղեր լուս են այս շրջանների շուրջը, որպէս է թատրոնը, խմբագրատունը, դպրոցները, և միայն քերին է յաջողուել անդամ լինել Ազգային ժողովի: Փրանտիական թեթև կրթութիւնը տուել է նրանց բնաւրութեանը թեթև լինել, աշխոյժ սննենալ, եռանդութ լինել, բայց ոչ տոկուն, խորամիտ և հեռատես լինել: Այդ մարդիկ շուտ յափշտակուող, շուտ ոգևորուող և շուտ տաքացող մարդիկ են, բայց միենոյն ժամանակ նաև շուտ սառչող են: Այս տեսակ յատկութիւնները, իրաւ է, պատրաստում են յեղափոխականներ, բայց չեն պատրաստում ասպարէզ դուրս եկող հերոսներ:

Այդ մարդիկ ազնիւ են և բարեմիտ. ցանկանում են, որ հայն էլ թոթափէ Թիւրքիայի լուծը, ազատ դրութիւն ունենայ, և իւր ազատութեան մէջ զարգանալ ու առաջադիմել սկսէ: Իսկ այդ վիճակին համնելու եղանակների մէջ ոչ միայն անփորձ են, այլև անընդունակ են: Ներկայ հանգամանքները բոլորովին երևան հանեցին դըրանց անընդունակութիւնը, որ իրանց ձեռքում ունենալով թատրոնական բեմը, լրագրութիւնն ու դպրոցները, գարձեալ չկարողացան մի հաստատուն հոգ պատրաստել, որի վրայ ոտք դնելով, մեր բարձրանար Թիւրքիայի հայը իւր ընկած դրութիւնից...:

Բայց կայ Կ. Պօլսում և մի ժողովրդական տարր, որ ներկայացնում է մշակ դասը: Նրանք ըստ մեծի մասին Հայաստանից եկած գաղթականներն են, որ մայրաքաղաքում կատարում են համալի, թուլումքաջիր, չոփչի, ջրկերի, դայրէկու և ուրիշ շատ ստոր ծառա-

յութիւններ: Հայրենիքից հեռացած այդ պանդուխտ հերոսներն են, որ ամեն անգամ՝ մի ազգային ծանր հարց բարձրացնելիս, շրջապատում են պատրիարքարանի չորս կողմը, գոներ և պատուհաններ են փշում, ազմուկ բարձրացնում և արգարութիւն են խնդրում: Այս թշուառ մշակները հայրենիքից դառն աղքատութեան հետ բերել են իրանց սրտի մէջ խորին վէրքեր, որ գործել է մահմեդականի բռնակալ ձեռքը, և այս պատճառով նրանց աւելի զգալի է թուրքերի անտանելի լուծը: Ամեն բան կորցրած լինելով,—տուն, տեղ, հայրենիք,—դրանք այլ ևս կորցնելու ոչինչ չունին, և առանց երկիրը բողոք են բարձրացնում և իրանց թշուառ, անտէր ընտանիքի համար ազատութիւն խնդրում՝ պատրիարքի օձերից բռնելով....:

100
Ա/357

2009-7-29

Կ. Պօլսի պատրիարքը, գուցէ անզլիական դեսպանի դրդելուց թելագրուած, ներկայացրեց Ազգային ժողովին մի ծրագիր, որով առաջարկում էր հայերի համար խնդրել այն արտօնութիւններից մէկը, որ պիտի վայելն սլաւօնական ցեղերը Բալկանի թերակղու վրայ: Ազգային ժողովը մերժեց պատրիարքի առաջարկութիւնը, յայտնի չէ ինչ հիմնաւոր փաստերով:

Որքան մեզ յայտնի է, Ազգային ժողովը ի նկատի է ունեցել այն, թէ արևմտեան եւրոպական պետութիւններից իւրաքանչիւրը աղեւելեան հարց պատրուակով միայն իրանց սեպհական շահերն են որոնում, և որովհետեւ Հայաստանի ազատութիւնը որևիցէ կերպով նրանց շահերը չէ չօշափում, ուրեմն հայերի առաջարկութիւնը կը մնար առանց հետևանքի կազմուելիք կօնֆերէնցիայի մէջ:



Մենք չենք խօսում, թէ նրան սխալ է այդ դատութիւնը, միայն կ'ասենք, թէ Անգլիան կըցանկանար չայսստանն ազատ տեսնել, քան թէ նրան մի ուրիշ պետութեան հետ խառնուած տեսնել. մենք հարկաւոր չենք համարում նուև բացատրել, թէ ինչ չահ ունի Անգլիան: Բայց դիցուք թէ ուղիղ է Ազգային ժողովի դատութիւնը, որով նա մերժում է պատրիարքի ծրագիրը, միայն մի հարց առաջարկենք՝ ինչ կըկորցնէր Ազգային ժողովը, եթէ կազմուելիք կօնֆերէնցիալին մի չայլական խնդիր առաջարկէր:

Մեղ կըպատասխանեն, թէ Ազգային ժողովի ձայնը իւր նպատակին չէր համնի, և այնուհետև հայերը կըկորցնէին իրանց հաւատարիմ հպատակութեան համարում և կասկածելի կըդառնային թիւրքերի աշըռմ: Մեղ կըպատասխանեն գուցէ մի աւելի ծայրայեղ բան, թէ թիւրքերը հայերին ապստամբ համարելով, կըսկսէին նրանց կոտորել Կ. Պօլսի մէջ:

Հաւատարիմ հպատակութիւնը մի այնպիսի պիտութեան վերաբերութեամբ, որպէսին է Թիւրքիան, նշանակում է կոյր հնազանդութիւն, այսինքն անտրտունջ տանել բռնակալի բոլոր բարբարոսութիւնները: Եւ հայերը մինչև այսօր իրանց հաւատարիմ հպատակութեամբ ոչինչ շշահեցին, միայն ծանրացրին իրանց ստրկութեան շղթաները: Որովհետև բռնակալ պետութիւններն աւելի ակնածութիւն են ունենում դէպի այն ազգերը, որոնք անհաւատարիմ կամ կասկածաւոր են, և այդպիսիների ձայնը կտրելու համար միշտ աշխատում են զրաւել՝ նրանց այս և այն պահանջները կատարելով: Իսկ հաւատարիմների վրայ նայում են՝ որպէս մորթուած զոհերի վրայ...: Այս խօսքերը ապացուցանելու համար բաւական է՝ օրինակ, վեր առնել Թիւրքիայի յոյներին, որոնք միշտ կասկածելի են ե-

ղել կառավարութեան աչքում, և միշտ աւելի պատուաւոր են եղել ու յառաջադէմ քան թէ հայերը:

Իսկ ինչ որ վերաբերում է միւս հարցին, թէ զուցէ թիւրքերը զայրանալով կըկոտորէին հայերին. նաև՝ այդպիսի բան պատահել չէր կարող, քանի որ Անգլիայի նաւատորմը կանգնած է Կ. Պօլսի պարիսպների տակ՝ ըրիստոնեաներին մահմեդականների բարբարոսութիւնից զերծ պահելու նպատակով: Բայց եթէ պատահէր ևս մի այդպիսի անցք՝ որ հայերին կոտորէին, նոյն իսկ կոտորածի միջից կըբարձրանար նրանց ազատութիւնը, որովհետև առանց արինի, առանց զոհերի վրկութիւն չէ վիճում...:

Ուրեմն ժամանակ է, որ Կ. Պօլսի Ազգային ժողովը իւր պատրիարքի հետ գործէ մի վճռական քայլ. տարտամ երկմտութիւնը պատպիսի հանգամանքներում ոչինչ օգուտ չի կարող բերել: Կօնֆերէնցիան այսօր թէ վաղը կըկաղմուի, եթէ այս տնկամ էլ չյաջողուի բարձրացնել մի չայկական հարց, այնուհետև Տաճկաստանի հայերի ապագան պէտք է կորած համարել:

Դեռ ևս ուշ չէ: Բայց երկար յապաղումը կըկատարէ հայերի վլխին աւետարանական այն առակը, թէ «փեսան կըդայ, պատրաստները կըմտնեն նրա հետ հարանիք, զոները կըփակուեն. յետոյ կըդան յիմնար կըսերը, զուռը կըբաղխեն և կ'ասեն. «Բաց մեզ, տէր»,» իսկ նրանց կըպատասխանեն. «չեմ ճանաչում ձեզ»...:

Հիմա մի շատ բնական հարց է ծագում. — միթէ ամենայն չայց Վեհափառ Կաթուղիկոսը պէտք է անտարբեր մնայ:

Բ ՀԱՅ ՎԵՐԱԿՐՈՆ Ա ՎԵՐԱԿՐՈՆ Ա ՎԵՐԱԿՐՈՆ Ա ՎԵՐԱԿՐՈՆ
ՀԱՅ ՎԵՐԱԿՐՈՆ Ա ՎԵՐԱԿՐՈՆ Ա ՎԵՐԱԿՐՈՆ Ա ՎԵՐԱԿՐՈՆ Ա ՎԵՐԱԿՐՈՆ


Եթէ ներկան անցեալի շարունակութիւնն է, եթէ ներկան ուղղելու համար պէտք է օգուտ քաղել անցեալից, այդ կէտից նայելով, մենք չենք սխալուիլ, եթէ ասենք՝ թէ Կ. Պօլսի պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրը», որ պարունակում է իւր մէջ տաճկական Հայաստանի ամբողջ քառորդ դարի գործերի արձանագրութիւնները, բաւական է առաջնորդ լինելու համար, թէ նրապիսի վերանորոգութիւններ պէտք է պահանջէ Կ. Պօլսի Հայոց Պատրիարքը, որպէսզի այսուհետև հայերի վեճակն ապահով լինի և նրանք ազատուեն մինչև այսօր գործած անիրաւութիւններից:

Քննելով պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրը», մենք զտնում ենք որ նա բովանդակում է իւր մէջ զլամաւրապէս հետեւեալ չորս կէտերը. ա. անապահովութիւն ապօռատի եւ սեպհականութեան, բ. անապահովութիւն կեանքի, գ. անարդարութիւն դատատանի մէջ եւ իրաւոնքի ոտնահարութիւն, դ. անապահովութիւն ազգային առանձնայատկութիւնների։ Ուրեմն Տաճկատանի հայերի վիճակը բարւորելու համար գործ դրուելիք վերանորոգութիւնները այն ժամանակ միայն կարող են նպատակայարմար լինել, երբ լիակատար բա-

ւականութիւնն կըտան վերոյիշեալ չորս կէտերի բարուզ-մանի:

Խօսենք իւրաքանչիւրի վրայ առանձին.
ա. Մենք ապրուստի և սեպհականութեան ան-
ապահովութիւն չենք համարում այն դէպքերը, որ հա-
յին հարստահարում են, նրա աշխատութեան արդիւնքը
ձեռքից խլում, և նա մշտապէս ենթարկուած է
զանազան բռնաբարութիւնների ու աւազակութիւնների.
նչ, Տաճկաստանում սեպհականութեան անապահովութիւ-
նը և հետեապէս ապրուստի գժուարութիւնը կայանում
է գլխաւորապէս այն բանի մէջ, որ հայր հող չունի, այս
պատճառով նա կեանքի հաստատուն հիմք չունի։ Հողի
վերաբերութեամբ մահմեղականի օրէնքը բովանդակվում է
այս վարդապետութեան մէջ. «Ամբողջ տիեզերքը Աստր-
ծուն է պատկանում, սուլթանը Աստուծու խալիֆան կամ
ներկայացուցիչն է երկրի վրայ, իսկ հողը նրա սեպհա-
կանութիւնն է։ Այստեղից առաջ է գալիս այն ծիծաղե-
լի մնահաւատութիւնը, իբր թէ ամեն մի երկիր, որի վր-
րայ ոտք է կոխում իսլամի թագաւորը, պէտք է նրան
պատկանի։

Հողի վերաբերութեամբ բոլոր կալուածական օրէնք-ները բդիսում են վերոյիշեալ վարդապետութիւնից. սուլ-թանը հողի տէրն է, իսկ երկրագործը՝ մշակ դասը նրա վարձակալը կամ կապալառուն։ Հայը հող ունենալու համար պէտք է վարձէ կառավարութիւնից, կամ տաճ-կական ասացուածքով խօսելով պէտք է թափու անէ. և այն օրից կրդագարի նրա իրաւունքը իւր վարձած հողի վրայ, երբ օրէնքի պահանջած ժամանակներում չնորոգէ իւր կալուածագիրը, կամ չկատարէ այս կամ այն պարտաւորութիւնները. իսկ մի այդպիսի կալ-



ուածագիր պայմանագրի գօրութիւն ունի, աւելի ու-
շինչ:

Այդպէսով ոչինչ չէ կապում երկրագործ գասին երկ-
րի հետ և հետևապէս մշակութեան կամ աշխատութեան
հետ: Ի նկատի ունենալով նաև այն անտանելի պայման-
ները, որով ծանրաբեռնվում է մշակը մի կտոր հող վա-
րելու համար, շատ հասկանալի է լինում, թէ ինչու նա
թողնում է հայրենի երկրը և հազարներով գաղթում
օտարութեան մէջ ապրուստ որոնելու: Ուրեմն հային
իւր հայրենի երկրի հետ կապելու համար, գաղթականու-
թիւնը դադարեցնելու համար՝ միակ և ամենակարեւը մի-
ջոցն է նրան իրաւոնք տալ ազատ կալուածատէր լի-
նելու, որ նա որպէս սեպհականութիւն իւր հողն ունե-
նայ և նրանից ամեն կերպով օգտուելու իրաւոնք ստա-
նայ: Դրանով կարելի է միայն հնար տալ գիւղացուն իւր
աշխատութեամբ իւր ապրուստը հայթայթելու: Նա չափ-
տի լինի վարձակալ, այլ հողը պիտի լինի նրա համար մի
հաստատուն ժառանգութիւն, որ անցնում է սերունդից
սերունդ, որ նա կարող է զնել, վաճառել, գրաւ
զնել, մի խօսքով, վարուել նրա հետ որպէս իրան պատ-
կանող սեպհականութեան հետ: Այդ պէտք է լինի չայոց
գատրիարքի պահանջելի գլխաւոր վերանորոգութիւննե-
րից մէկը. և եթէ նա ցանկանում է, որ հայքարմատ ձգէ
չայստանի հողի վրայ, պէտք է նրա տէրը լինի, պէտք
է նրանից ծծէ իւր սնունդը, ինչպէս մանուկը մօր ըս-
տինքներից: Խսկ ինչ որ վերաբերում է մուլթէզիւնների
(կապալառուների) հարստահարութիւններին, հարկերի
ծանրութեանը, որոնցով կողովտվում է մշակ դասը, ինչ
որ վերաբերում է զանազան բռնականների և տէրէրէզի-
ների կեղերումներին, մենք համարում ենք այդ բոլո-
ր ժամանակաւոր անկարգութիւններ, որոնցից պատ-

չեն մնում նոյն խսկ մահմեդականները, և որոնք Թիւր-
քիայի ընդհանուր բարենորոգումների ժամանակ մի-
այն կարող են կարգի և օրինաւորութեան մէջ գրուել:
բ. Հայերի կեանքի անապահովութիւնը քրդերից,
չերքէզներից և զանազան վայրենի ցեղերից անգաղար
կեղեքուիլլ, որպէս Սան-Ստէֆանոյի գաշնագրութիւն 16-րդ
յօդուածի, նոյնպէս և Բերլինի վեհաժողովի վճռի 61-րդ
յօդուածի գլխաւոր հիմունքն է կազմում: Բայց որքան էլ
աշխատէ Թիւրքիայի կառավարութիւնը՝ պահպանել ան-
զէն հայերին զինեալ մահմեդականների բարբարոսութիւն-
ներից, անկարելի է, որովհետև իւր բոլոր զինուորական
ոյժը, որով պէտք է զապի, նրանց, նոյն խսկ բարբարոս-
ներից է կազմուած: Ուրեմն հայերին պէտք է թոյլ տը-
ւած, որ իրանք իրանց պաշտպանեն, և այդ այլ կերպ
լինել կարող չէ, բայց միայն իրաւոնք տալ, որ հայերը
զէնք կը են, որպէս իրանց դրացի ազգերը, և բացի դը-
րանից, Թիւրքիայի զինուորութեան մէջ նրանք էլ մաս-
նակցեն: Պէտք է հայը ինքը հնար ունենայ իւր անձը
պաշտպանելու, երբ կառավարութիւնն անկարող է: Ով որ
ծանօթ է Թիւրքիայի կազմակերպութեանը, մեզ հետ կը-
համաձայնի, որ այդ երկրում անկարելի է ապրել և իւր
գոյութիւնը պահպանել առանց զէնքի: Թիւրքիան բնա-
կեցրած է այնպիսի ցեղերով, որոնք իրար հետ մշտա-
պէս կռվում են, որոնք միմեանց հետ մրցում են սրով
միայն: Ինչու կարող է ընդդիմադրել նրանց անզէն
հայը:

Գալով Թիւրքիայի զինուորութեան մէջ հայի մասնակ-
ցելուն, դա պէտք է հայերի գլխաւոր պարտաւորութիւն-
ներից մէկը լինի ոչ միայն որպէս Թիւրքիայի հապատակ և
քաղաքացի, այլ մի այդպիսի ծառայութիւնը կ'ազատէր
նրանց պատերազմի ժամանակ արտաքին, խսկ խաղաղու-

թեան ժամանակ ներքին թշնամիներից։ Հայերն առանց դրան էլ զինուորական տուրք են վճարում Թիւրքիայի կառավարութեանը և նոյն տուրքով կարող են պահպանել մի ազգային միջլիցիա։ — Ինչու անպատճառ միջլիցիա։ Ինչու հայերը չպիտի մամնակցեն Թիւրքիայի ընդհանուր զինուորակարութեան մէջ, կըհարցնեն մեղանից։

Որքան մեզ յայտնի է, Թիւրքիայի մամնաւոր ազգերից և ոչ մինը, որպէս են՝ քրդերը, չերքէղները, արաբները և այլն, չեն մամնակցում Թիւրքիայի զինուորակրութեանը և չեն մտնում նրա կանոնաւոր զօրքերի թւում, այլ կազմում են առանձին միլիցիաներ, որոնք պատերազմուց յետոյ վերադառնում են իրանց տները։ Աւելի ևս հայերին անկարելի է որպէս զինուոր մտնել թիւրքերի կանոնաւոր զօրքերի մէջ։ որովհետև զանազան կրօնական խարութիւններ թոյլ չեն տալիս այդ երկու ազգերին միմեանց հետ խառնուել, միմեանց հետ սերտ յարաբերութիւն ունենալ, և մինչև անզամ թիւրք զինուորը չի ցանկանայ իւր մէջ ընդունել ոչ-մահմեդականին։

Եթէ հայերից պահանջուին կանոնաւոր զինուորներ և ոչ միլիցիա, այն ժամանակ ևս հայոց զինուորները պէտք է առանձին գունդեր կազմէին թիւրքաց բանակի մէջ իրանց հայ զօրապետներով ու զօրափարներով։ Այսպէս եղել է միշտ։ Արշակունեաց պետութիւնը վերջանալուց յետոյ Հայաստանի ամբողջ մարզպանութեան դարերում պարսիկների, այլև արաբացոց ու թաթարների տիրապետութեան ժամանակ, և մինչև անզամ յոյների ժամանակ, հայոց զինուորները օտարազգիների բանակի մէջ միշտ առանձին գունդեր էին կազմում իրանց զօրապետներով *): Նրանք իրանց հետ ման էին

*) Նորին մեծութիւն պարսից Շահի ժամանակ, երբ հա-

ածում մինչև անզամ քահանսներ և եկեղեցական խորան։

Հայերին զանազան վայրենի ցեղերից պաշտպանելու համար կառավարութեան կողմից գործ դրուած ամեն հսկողութիւն անօգուտ է. պէտք է հային նրա տալ, որինքը իւր գլուխը պահպանէ, և դա կըլինի այն ժամանակ, երբ նա զէնք կրելու իրաւունք կ'ունենայ։ Այդ ուրիշ բան է, երբ կառավարութիւնը իւր բոլոր հպատակներին զինաթափ անէ և ամեն անհատ նրա հովանաւորութեան ներքոյ պաշտպանութիւն և կեանքի ապահովութիւն գտնի։ Բայց Թիւրքիայի կառավարութիւնը ոչ կարող է և ոչ կըցանեկանայ այդպէս անել։ Երբ սորանից մի քանի տարի առաջ խօսք եղաւ քրդերին զինաթափ անելու, այն ժամանակուայ Թիւրքիայի երևելլ պետական մարդկանցից մէկը՝ Ալի-փաշան ասաց. «Պէտք չէ, քրդերը միշտ պատրաստի զօրք են մեզ համար»։ — Այն, պատրաստ զօրքից, որ անզէն հպատակների հաշուով են ապրում, կառավարութիւնը պէտք է օգուտ քաղէ, որպէս և վերջին պատերազմի ժամանակ երեաց։

Մեր կողմից աւելորդ կըլինէր խորհուրդ տալը, քանի որ զիտենք, թէ Կ. Պօլսի պատրիարքարանը լաւ հասկացել է հայկական միջլիցիայի կարեռութիւնը երկիրը ներքին թշնամիներից պահպանելու համար, և Բերլինի վեհաժողովի մատուցած ծրագրի մէջ այդ անցուցած էր նրա խնդիրների կարգում։ Միայն պէտք է այժմ

յերից զինուորներ առնուեցան, դարձեալ առանձին գունդեր կազմուեցան հայ զօրապետների զօրափարութեան ներքոյ։ Նոյն իւր պարսիկները թոյլ չտուեցին, որ քրիստոնեայ հայը խառնուէր իրանց հետ։

դարձեալ նոյնը պահանջել, որ հայերը փոխանակ դի-
նուորական հարկ վճարելու, նոյն տուրքով պահէին ի-
րանց երկրում միլիցիաներ, որոնք խաղաղութեան ժա-
մանակ պահպանէին երկիրը ներքին յարձակումներից,
իսկ պատերազմի ժամանակ օգնէին պետութեանը:
Այլ կերպ ապահովութիւն քրդերի, չերքէղների և ու-
րիշ վայրենի ցեղերի բարբարոսութիւններից մենք չենք
ճամաշում:

Գ. Թիւրքիայի մէջ ոչ-մահմեդականների վերաբերու-
թեամբ իրաւունքի անպաշտպահութիւն և դատաստա-
նի մէջ անարդարութիւն կըտիրէ միշտ, քանի որ դա-
տավարութեան մէջ տիրէ շարիաթի օրէնքը: Եթէ
մտածենք, թէ ոչ մի օրէնք չէ կարող մշտական լինել,
այլ նա պէտք է հետզինետէ փոփոխուի և կատարելագոր-
ծուի, որքան փոփոխում և կատարելագործվում է
մարդկային կեանքը, և որքան նորանոր ձեռք են ստա-
նում նրա պէտքերն ու պահանջները, — կարող ենք հա-
մարձակ ասել, որ շարիաթի այսքան դարերի ընթացքում
համացած և մաշուած օրէնքները անբաւարար և անհամա-
չնացած պատասխան են ոչ միայն ոչ-մահմեդականների համար,
պատասխան են ոչ միայն ոչ-մահմեդականների համար,
այլ նոյն իսկ մահմեդականների վերաբերութեամբ, որոնց
կեանքի նահապետական պարզ ձեռքը շատ և շատ փոխ-
ուել են, սկսեալ այն օրից, երբ այդ օրէնքները հրա-
տարակուեցան իսլամի մարդարէի բերանով և ամփոփուե-
ցան զօրանի մէջ: Անփոփոխ և մշտական օրէնքներ, որ
տրվում են աստուածական ժողովուրդներին, ուրիշ ո-
չինչ չեն, եթէ ոչ, մի ծանր կապանք, որ կաշկանդում,
քարացնում է պղպերը յաւիտենական անշարժութեան
մէջ:

Դժուար է պահանջել Թիւրքիայից, որ նա փոխէր
շարիաթը, որովհետեւ նա սերտ կապ ունի մահմեդական

կրօնի հետ. բայց կարելի է պահանջել, որ հայերի և առ-
հասարակ ոչ-մահմեդականների վերաբերութեամբ նա մը-
նար անզործագրելի: Ուրիշ կերպ անկարելի է, քանի որ
այդ օրէնքը իւր մէջ ունի շատ սկզբունքներ, որ հակա-
ռակ են հաւասարութեան գաղափարներ, որ խտրութիւն
են զնում այն բոլոր աղքերի վերաբերութեամբ, որոնք
չեն պատկանում իուլամին: Եթէ մինչկ այսօր սուլթան-
ների հրատարակած բոլոր խաթթիները և ֆիզմանները
մնացել են անզործագրելի, պատճառը շարիաթի զօրեղ
ընդդիմադրութիւնն է և ոչ այլ ինչ:

Ուրեմն ինչ միջոց կայ շարիաթից ազատուելու:

Ճշմարտութիւնը պահանջում է խոստովանել, որ
Թիւրքիայի կառավարութիւնը դեռ շատ առաջ մտածել
է, որքան կարելի է, ազատ կացուցանել ոչ-մահմեդական-
ներին և առաւելապէս հայերին շարիաթի կապանքներից:
Այդ երկում է այն արտօնութիւնից, որ Թիւրքիան չորհեց
հայերին՝ տալով սահմանադրական վարչութիւն. բայց
դրանից գաւառներում կազմուեցան խառն մահմեդական-
ներից և ոչ-մահմեդականներից առանձին մէջիսներ
(ժողովներ) նրանց գործերը քննելու համար, որ այս
ոչ-մահմեդականները գործ չունենան ուլէմների և զարի-
ների հետ: Այսուամենայինիւ թէ սահմանադրութիւնը
և թէ գաւառական մէջիսները չկարողացան բաւակա-
նութիւնն տալ հայերին: Ինչո՞ւ: Որովհետեւ չայոց Ազգա-
յին Սահմանադրութիւնը ունէր աւելի կրօնական բնաւո-
րութիւնն, նա չէր անցնում բուն ազգային գործերի սահ-
մանից, որպիսի են դպրոց, եկեղեցի և այլն: Իսկ զաւա-
ռական մէջիսները իրանց անկարգ կազմակերպութեամբ
ոչինչ օգուտ չեն բերում:

Մեր կարծիքով հայերին թիւրքերի կառավարութեան
գաւառասահման անիրաւութիւնից ազատելու համար նոր

բան պահանջել դժուարութիւններ կըյարուցանէր, գուցէ չտային էլ: Հարկաւոր է պահանջել, որ լրացնեն, կատարելագործեն այն արտօնութիւնները, ինչ որ մի անգամ չնորուած է հայերին, թէս անկատար կերպով: Մենք գարձեալ ի նկատի ունինք Ազգային Սահմանադրութիւնը և գաւառական մէջլիսները:

Եթէ հայոց Ազգային Սահմանադրութիւնն ընդլայնէ իւր նեղ շրջանը նոր իրաւունքներով, եթէ տրուին նրան և քաղաքական իրաւունքներ, եթէ նա Կ. Պօլսի պարիսպներից գուրս գալով, տարածուի բոլոր հայաբնակ գաւառները, այնուհետև մի այդպիսի վարչութիւն կարող էր հայերի թէ եկեղեցական, թէ քաղաքական և թէ քրէական բոլոր գործերին բաւականութիւն տալ, և հայերն աւելի պատրաստուած լինելով մի այդպիսի վարչութեան համար, իրանց գործերն իրանց մէջ իրանց ձեռքով կըվճռէին: Բայց այս այսպէս լինելուց յետոյ ծագում է մի հարց. ինչպէս և որտեղ պիտի վըճռուին այն գործերը, որ հայը ունի մահմեղականի հետ:

—Գաւառական մէջլիսներում:

Գաւառական մէջլիսների նպատակը, որպէս վերեւում յայտնեցինք, եղել է վճռել զանազան աղքութիւնների գործերը, և այս մտքով յիշեալ դատարանների անդամները ընտրում են խառն մահմեղականներից և ոչ-մահմեղականներից: Բայց եթէ մինչև այսօր նրանք իրանց նպատակին չծառայեցին, պատճառն այն է, որ մէջլիսները գուրիկ են որկիցէ որոշ օրէնսդրութիւնից. գրաւոր ոչնչ չկայ, գործերի քննութիւնը լինում է բերանացի կերպով և վճռուները կայանում են միայն ձայների վրայ՝ ոչ թէ նրանց բագութեանը նայելով, այլ թէ ձայն տըռողը որպիսի դիրք է բռնած ժողովի մէջ: Այսպիսի հան-

գամանքներում, յայտնի բան է, կամայականութիւնը մեծ զեր պիտի խաղայ և գործերը պիտի վճռուին այն անձանց օգախն, որոնք ժողովի մէջ զօրեղ պաշտպաններ ունին, իսկ զօրեղ պաշտպաններ կարող են լինել մահմեղականները, որովհետև ոչ-մահմեղականները միայն ձեփի համար են այնտեղ նատած լինում:

Այստեղից երեւում է, որ Թիւրքիայի կառավարութիւնը սկիզբն է դրած այն հիմնարկութիւնների, որ պէտք է բարւորէին ոչ-մահմեղականների վիճակը, բայց որոնք անկարգ և անկանոն են: Նա չնորհել է հայերին Ազգային Սահմանադրութիւնն, բայց անկատար. նա հիմնել է գանգան ազգութիւններից խառն մէջլիսները, բայց առանց օրէնքի:

Այդպիսի խառն մահմեղականներից և ոչ-մահմեղականներից կազմուած մէջլիսները այն ժամանակ միայն կարող են նպատակայարմար լինել, երբ կըհիմնուեն եւրոպական օրէնսդրութեան սկզբունքների վրայ, և երբ բոլորովին նոր կազմակերպութիւն կըստանան: Այդպիսի մի գատարանի պահանջ կար հայոց պատգամաւորների Բերլինի վեհաժողովին ներկայացրած ծրագրի մէջ, բայց նա բուն հայկական էր: Մեր կարծիքով, չպէտք է վախեցնել Թիւրքիային, իբր թէ նրանից նոր բան է պահանջում. հարկաւոր է միայն արդէն եղածների և մի անգամ չնորհուածների ձեր փոխել: Այս քաղաքականութեանը պէտք է հետեւի Կ. Պօլսի պատրիարքարանը իւր պահանջելի վերանորոգութիւնների մէջ:—Ընդգրածակելով հայոց Ազգային Սահմանադրութեան սահմանափակ շրջանը նոր իրաւունքներով, և տարածելով բոլոր հայաբնակ գաւառները, այդ բաւական կըլինէր հայերին հնար տալ իրանց գործերն իրանց ձեռքով վճռելու. իսկ վերանորոգելով գաւառական մէջլիսները, կըգիւրացնէին նրանց

դպտաստանական յարաբերութիւնները օտարազգիների հետ։ Անապահովութիւն ազգային առանձնայատկութիւնների։ Խօսելով ազգային առանձնայատկութիւնների վրայ, Թիւրքիայի հայի պիճակը մեր առջև խիստ տիսուր գոյներով է նկարվում։ Մինչև այսօր մենք սխալ կարծիքի մէջ էինք, մենք այսպէս էինք մտածում։ «Հայոց ազգը մի կրօնական ազգ է, նրա հիմքը դրած է իւր եկեղեցու վրայ, իսկ մեր եկեղեցին կարող է աւելի հաստատուն մնալ Թիւրքիայում, ուրեմն այնուղիւ կարող է պահպանուել և մեր ազգութիւնը»։ «Եթէ մեր ազգը այսօր գոյութիւն ունի, դրանով մենք պարտական ենք մահմեդականութեանը», — ասում էր մեր երեխի մտածողներից մէկը։

Մենք թողնում ենք վիճել այդ կարծիքի դէմ, որովհետև հայը ամենկեն կրօնական ազգ չէ, թողնում ենք հերքել նաև մի այդպիսի դատողութիւն, որովհետև լոկ կրօնով մի ազգ մշտապէս պահպանուել չէ կարող, և դժուար թէ միայն եկեղեցին ազգութեան գոյութիւնը պահպանել կարողանայ. և ընդունում ենք, որ հայը միայն իւր կրօնով և եկեղեցով կարող է միշտ հայ մնալ, բայց հայոց կրօնն ու եկեղեցին որտեղ են այնքան վտանգի ենթակայ, որքան Թիւրքիայում։

Թէ ինչպէս է կրանում մահմեդականութիւնը քրիստոնեայ ժողովրդներին, բաւական է աշքի առաջ ունենալ այն բազմաթիւ մահմեդականացած հայոց գիւղօրայրը, որ այժմ կարելի է տեսնել Փոքր-Սփիայի ամեն կողմերում։ Բայց Թիւրքիայում կայ մի աւելի սաստիկ վտանգ հայոց եկեղեցուն՝ քրիստոնեայ միսիօնէրներից, որոնք աւելի ճարպիկ են քան մահմեդականները, որոնք քարոզներով են կրօնափոխ անում, իսկ թիւրքը բռնութեամբ:

Ոչ մի երկրում կաթոլիկութիւնն ու բողոքականութիւնը այնքան տարածուած չէ հայերի մէջ, որքան Ցաճկաստանում. համարեա ամեն տեղ մտել են նրանց քարոզիչները. Ել ինչ խելքով ենք մտածում, թէ մեր եկեղեցին Թիւրքիայում ապահով դրութիւնն մէջ է։ Կրօնափոխութիւնն այսուհետեւ աւելի կը սաստկանայ, երբ անգլիացիները Փոքր-Սփիան իրանց հովանաւորութեան տակ առնելով, կը մտցնեն հայերի մէջ իրանց միսիօնէրներին*։ Մինչև այսօր յայտնուած քարոզիչները ամերիկացիք էին, այսուհետեւ կ'աւելանան և անգլիացիք. իսկ այդ վերջինները աւելի հեշտ կերպով կարող են որսալ, քանի որ գիտենք, թէ կրօնափոխ եղող հայերը աւելի մահմեդականների հալածանըների դէմ պաշտպանութիւն գտնելու համար են հեռանում մայրենի եկեղեցուց, քանի թէ համոզմունքով. իսկ անգլիացիք միշտ կարող են պաշտպանել իրանց նոր հաւատակիցներին։

Թիւրքիայի խորամանկ քաղաքականութիւնը՝ կարծես լաւ էր ըմբռնել, թէ ինչ նշանակութիւն ունի կրօնափոխութիւնը հապատակ քրիստոնեայ ազգութիւնների մէջ։ Նա տեսնելով, օրինակ, հայերին մի կրօնական ժողովուրդ, որ ուրիշ հիմք չէ ճանաչում իւր ազգութեան համար բայց եկեղեցուց, միշտ աշխատել է զբաղեցնել նրանց կրօնական երկպառակութիւններով, միշտ աշխատել է քանդել նրանց միութիւնը, թոյլ տալով տարածուել հայերի մէջ կաթոլիկութիւն և բողոքականութիւն։

* Դեռ ևս ոռու-թիւրքական պատերազմից առաջ ինձ պատահեց Թաւրիքում խօսել մի անգլիացի քահանայի հետ, որ վերադառնում էր տաճկական Հայաստանից. նա յայտնեց, թէ Լօնդոնում նպատակ կայ քարոզիչների մի առաքելութիւն ուղարկել Հայաստան։ Այդ մարդը ուղարկուել էր հետազօտելու հողը...։

Հին սուլթանները ազգայնութեան աւելի հիմնական արմատին էին զարկում—իեղուին, և որի պատճառով յայտնուեցան այնքան բազմաթիւ տաճկախօս և քրդախօս հայեր, որ մինչև այսօր էլ կան, թէև հայոց եկեղեցուն են պատկանում: Իսկ վերջին սուլթանների ժամանակ սկսեցին քրիստոնեայ ժողովուրդների ուժերը թուլացնել և նրանց ազգային միութիւնը բաժանել կրօնական հերձուածներով:

Թիւրքիայի քաղաքականութիւնը չէր բաւականանում, որ հայերից նոր եկեղեցիներ էին կադմվում, այլ աշխատում էր այդ վերջինների մէջ ևս հերձուածներ տարածել, որպէս եղաւ հայ-բողոքականների և հայ-կաթոլիկների մէջ: Այդ մասին բաւական է յիշել չասունեանների և չակահասունեանների կռիւը, որ մի քանի տարի տեսեց. և եթէ կառավարութիւնը օգնեց չակահասունեաններին, այդ ոչ թէ նրանց աւելի ազատամիտ ձգտումների համար էր, այլ որ նրանք մի նոր հերձուած էին կազմում հայ-կաթոլիկների մէջ, մի որոշեալ չափով տկարացնում էին նրանց ուժերը:

Առասարակ Թիւրքիայի քաղաքագիտութիւնը մենք շատ միամիտ հնք համարում, քան թէ է, չնայելով որ նա իւր մոնղուեան խարէութեան վրայ պատուաստել է բիւզանդական խորամանկութիւնը: Նա գիտէ իւր հապտակ ժողովուրդների մէջ միշտ խոռովութիւններ սերմանել, նրանց միութեան կապերը խզել: Ով որ ուսումնասիրել է Կ. Պոլսի հայոց լրագրութիւնը, կը յիշէ, որ երուսաղէմի ս. Յակովքայ վանքը մի երկպառակութեան խնձոր է Կ. Պոլսի հայոց և յունաց պատռակարանների մէջ. ամեն տարի սուրբ Յարութեան տօնին միշտ անկարգութիւններ են պատահում հայ և յոյն աբեղանների մէջ. շատ անգամ այդ կռիւները արիւնհեղու-

թեան են համնում. բայց այսրան տարիների ընթացքում կառավարութիւնը վերջ չգրեց նրանց վէճերին, թէև չընշին բաներին:

Այժմ, կարծեմ, ընթերցողը մեղ հետ կըհամաձայնուի, թէ ինչ վտանգ է սպառնում հայոց եկեղեցուն Թիւրքիայում, և եթէ դա պէտք է լինի ազգի գոյութիւնը պահպանող հիմունքը, նրա կեանքը խիստ երկրայական է... (Բերլինի գաշնազը համեմատ Թիւրքիայի խոսացած «կրօնի ազատութիւնը» մի նոր ասպարէզ պիտի բաց անէ երոսացի քարողիչների առջե,) և հայերը՝ Փոքր-Ասիայի հովանաւորող անզիացիներից պաշտպանութիւն գտնելու յուսով պիտի զոհին իրանց կրօնը. ով կարող է մրցութիւն անել նրանց հետ. — մեր անհոգ հոգեստականութիւնը, թէ մեր թեթևոլիկ ուսումնականները... — Ո՞չ ոք, մեր կարծիքով: Այժմ կրմնայ Թիւրքիայի հային թողնել եկեղեցին, թողնել կրօնը անհատների խըզճի վրայ և ձեռք մեկնել հայ-կաթոլիկին, հայ-բողոքականին և հայ-մահմեդականին, և ասել նրանց. «Մենք եղայրներ ենք, մենք միասին պէտք է բաժանենք մեր ներկան և ապագան, թող եկեղեցին չբաժանէ մեղ, միացնենք մեր ուժերը և միասին գործենք»:

Վերջացնելով այս զլուխը, կըհամառօտենք մեր կարծիքը այս խօսքերով. այժմ Կ. Պոլսի պատրիարքը՝ որ զբաղուած է Թիւրքիայի հայերին տրուելիք վերանորոգութիւններով, նախ և առաջ պէտք է միանայ հայ-կաթոլիկների և հայ-բողոքականների ներկայացուցիչների հետ, և որպէս ընդհանուր ազգային գոլծ, զլխաւորապէս պէտք է ի նկատի ունենայ հետեւեալ պահանջները. ա. Երկրագործ գիւղացին սեպհական հող ունենայ և նրան ապահովութիւն տրուի ազատ մնալ բռնաւորների, հարըստահարիչների աւազակութիւններից: բ. Հայերն իրաւոնք

ունենան զէնք կրելու, որպէս իրանց դրացի ազգերը, և
փոխանակ զինուորական տուրք վճարելու, նոյն վճարով
կազմեն ազգային միլիոնիա՝ զամսազան վայրենի ցեղերից՝
քրդերից, չերքէզներից իրանց կեանքը և կայքը պահպա-
նելու համար։ գ. Հայոց Ազգային Սահմանադրութիւնը,
նոր իրաւունքներով և արտօնութիւններով կատարելա-
գործելով, տարածուի բոլոր հայաբնակ գաւառներում։ դ.
Ազգը և ազգային առանձնայատիւթիւնները պահպանելու
համար այնպիսի կարգադրութիւններ լինին, որ սահման
դրուի մահմեդականների մոլեւանդութեանը, և բռնի
հաւատափոխութիւններին, առևանգութիւններին վերջ
դրուի։ Այլև վանքերի և ազգային դպրոցների առաջադի-
մութիւնը սահմանափակող Թիւքրիայի գործ դրած խո-
րամանկ միջոցները հեռացուին, որ ուսումն ու կրթու-
թիւնն անարգել ընթացք ստանան։

Ժամանակ է թօթափել հին նախապաշտությունների փոշին, ժամանակ է ձեռք առնել դպրոցը, որպէս մի նոր կապ մեր և մեզանից օտարացած ազգայիների մէջ, որպէս մի նոր աւազան, ուր հայ-կաթողիկը, հայ-մահմեդականը և հայ-բողոքականը կրմկրառութեն նոր հոգևով և նոր կեանքով, և կրդրոշմուխն ազգայնութեան անունով. դրանով միայն կարող ենք միացնել մեզ հետ մեր եղբայրներին, որ բաժանեց եկեղեցու աւագանը...:

Ք Ր Դ Ա Կ Ա Ն Մ Ի Ո Ւ Թ Ի Ւ Ն

Դեռ մի քանի ամիս առաջ Կ. Պօլսի թուրք մամուլը անամօթաբար սկսեց հոչակել քուրդ տարրի քաղաքակրթական հրաշալիքները, որոնցով հայկական լեռների այդ վայրենի գազանիներին աշխատում էր ներկայացնել Եւրոպայի աշքում ոչ միայն իրքու արևելքի, այլև իրքու արևմուտքի լուսաւորիչներ։ Մի այդպիսի երեխայական աշքակապութիւնը՝ թուրք մամուլի կողմից, ստորէ ամեն կրիտիկայից, այն մամուլի, որ մի ժամանակ պահանջում էր քրդերի իսպառ բնացինչ անելը, նրանց ոչնչացնելը, որպէս անպէտք և վնասակար մի տարր, որպէսզի ասիական Թիւրքիայի արևելեան սահմանագլուխներն ազատուէին այդ աւազակների անկնդհատ անպատճեութիւններից։

Սուլիման Արդուլ Մէջիդը յայտնուեցաւ որպէս մի

սպառնալի գործիք քրդերին ոչնչացնելու համար և նը-
րանց անշուշտ վիճակուած կը լինէր ենիշէրիների կոտո-
րածը, եթէ այն ժամանակուայ երեելի դիպլօմատ և ա-
ռաջին վէզիր Ալի փաշան չմեղմէր սուլթանի բարկու-
թիւնը: Խորամանկ վէզիրը կարողացաւ համոզել խալիֆ-
ների դիւրահաւան գահակալին, յայտնելով այն միտքը,
թէ քորդերը թէն աւագակ, բայց միենոյն ժամանակ
պատրաստի վինուորներ են Թիւրքիայի համար, և կառա-
վարութիւնը պէտք է փոքր ի շատէ զիջանի նրանց ան-
կարգութիւններին, որպէս զի նրանք միջոցներ ունենա-
յին ապրելու և հարկաւորած ժամանակ ծառայէին որ-
պէս քաջ պատերազմողներ:

Իսկ այդ զիջողութիւնը խիստ թանգ էր նստում
կառավարութեանը: Ամայացնելով սահմանազլսի ամրող
գաւառները, վերջին չքաւորութեան մէջ ձգելով ժողո-
վուրդին, խանգարելով երկրագործութիւնը և վաճառա-
կանութիւնը, քրդերը ոչ միայն իրանք հարկ չէին վճա-
րում, բայց միենոյն ժամանակ զրկում էին տէրութեան
գանձարանը որեիցէ եկամուտ ստանալու այն երկրներից,
որ այդ վայրենիները դարձել էին իրանց յափշտակու-
թիւնների ասպարէզ:

Սուլթան Աբդուլ Ազիզի կառավարութիւնը քրդերին
դրագելու համար այն եղրակացութեան հասաւ, թէ պէտք
է նրանց զինաթափ անել, թէ պէտք է նրանց հեռա-
ցնել վրանաբնակ հովուի թափառաշրջիկ կեանքից և ըն-
տելացնել երկրագործի հաստատարնակ կեանքին: Ամեն
աշխատութիւններ ապարդին անցան և քրդերը մնացին
միշտ աստանդական հովիւներ և իրանց անասունների
հօտերով ամառը թափառում են չայստանի հովասուն
լեռների վրայ, իսկ ձմեռը իջնում Տիգրիսի հովտի ջերմ
տափարակների վրայ: Իսկ ինչ որ վերաբերում է նրանց

զինաթափ անելուն, այդ նոյնական մնաց անկատար,
չնայելով որ Վանի փաշաներից մէկը հնարեց մի ծիծա-
դելի տուրք, որով քրդերը պարտաւորվում էին վճարել
մի նշանակեալ հարկ, եթէ շարունակէին զէնք կը-
րել:

Այդ միջոցներում սկսուեցան կառավարութեան ճըն-
շումները քուրդ ցեղապետների վրայ: Բաղրխան-բէկին
աքսորելը և նրա ազգատոհմի մեծ մասը սրից անցկա-
ցնելը պէտք է համարել այն սաստիկ հարուածներից մէ-
կը, որ թուրք կառավարութիւնը որեիցէ ժամանակ հաս-
ցրել է քրդերին: Դրանից յետոյ քուրդ ցեղապետները
գարձան կառավարութեան ներկայացուցիչների ձեռքում
մի տեսակ արգիւնքի աղբիւր: Նրանց բանտարկում էին,
տանջում, աքսորում, և այդ բոլորը կատարվում
էր ոչ այնքան երկիրը խաղաղացնելու նպատակով, որ-
քան օգուտ էր բերում փաշաներին, որոնք կաշաքներ
ընդունելով, կրկին բաց էին թողնում՝ կալանաւորներին:
Կարգ և կանոն պահպանելու այդ ձեզ առիժ էր տալիս
քուրդ աւագակներին աւելի ևս եռագույն յարատեել իրանց
յափշտակութիւնների մէջ՝ կապիտալ ձեռք բերելու
համար, որպէսզի նրանով կարողանային ազատուել, եթէ
միւս անդամ պատահէր նրանց կալանաւորուած լի-
նել:

Այդ, քրդերի հասկացողութեամբ, անիրաւացի ճըն-
շումները, այդ անդադար հալածանքները մնուցին քրդե-
րի մէջ մի սաստիկ թշնամութիւն դէսի թուրք կառա-
վարութիւնը մասնաւորապէս և դէսի առհասարակ թուր-
քերն ընդհանրապէս: Խանգարում էին նրանց սովորական
կեանքի եղանակը, զրկում էին նրանց ապրուստի միջոց-
ներից՝ աւագակութիւնից, որ քրդերի ցեղային և աւան-

դական սովորութեամբ համարվում է ոչ քոլորովին անբարոյական մի պարապմունք:

Այդ ատելութիւնը դէպի թուրքերը առիթ տուեց քրդերին աւելի մօտենալ հայերին և աւելի մտերմանալ նրանց հետ:

Քրդերի-ամբողջ ժողովուրդը, բաժանուած լինելով բազմաթիւ տարբեր և միմեանց հետ թշնամի ցեղերի, անկարելի էր, որ նրանց մէջ կազմուէր միութիւն, որով կարողանային ընդդիմանալ կառավարութեան ճնշումներին: Պատսպարուած լինելով հայկական լեռների մէջ, նրանք իրանց վրէժխնդրութիւնը լրացնում էին նրանով, որ կողոպտելով երկրի մի մասը, հեղեղի նման անցնում էին մի ուրիշ երկրի, և տեղային վարչութիւնները իրանց անգօր ուժերով երբէք չէին կարողանում վերջ դնել քըրդերի անընդհատ արշաւանքներին:

Իսկ այդ ցեղերի մէջ կային և այնպիսիները, որոնք համեմատաբար աւելի հանգիստ էին բնաւորութեամբ, որոնք, որպէս միամիտ հովհիներ, ապրում էին նահատետական սպարդ կեամբով: Այդ վերջինների ցեղապետները ոչ սակաւ անգամ դիմում էին հայ էֆէնդիների և հայոց հոգեոր առաջնորդների օգնութեանը՝ թուրք կառավարիչների կամայականութիւնից պաշտպանութիւն դժուելու համար: Հայ էֆէնդիները և հայոց հոգեոր առաջնորդները, որոնք աւելի նշանակութիւն ունէին կառավարութեան առջև, որպէս երկրի գլխաւոր և մեծամասնութիւն կադմող ազգաբնակութեան ներկայացուցիչներ, չէին իննայում իրանց պաշտպանութիւնը, թէև այդ պաշտպանութիւնը շատ հաճելի չէր կարող լինել հայ ժողովրդին, որ պատմական ատելութիւնն ունէր դէպի քրդերի առհասարակ քոլոր ցեղերը: Այդ էր պատճառը, որ Վանի առաջնորդ Պօղոս վարդապետը յարուց իւր դէմ մի ահապին կուսակ-

ցութիւն այն պատճառով միայն, որ նա պաշտպանում էր քուրդ ցեղապետներին, նրանց հետ բարեկամութիւն էր պահպանում, և պատահած ժամանակ, իւր սեպհական ծախքերով, ազատում էր նրանց բանտերից: Ճարունակ տասն տարի Վանի հայերը բաժանուած էին երկու կուսակցութեան, որոնցից մէկն աշխատում էր պաշտօնից հեռացնել քրդասէր առաջնորդին, իսկ միւսն աշխատում էր պահպանել նրան: Այդ կուները երկար զբաղեցրին Կ. Պօլսի հայոց մամուլին և ոչ սակաւ հոգսեր պատճեցին պատրիարքարանին:

Հայ առաջնորդների և հայ էֆէնդիների քրդերի խաղաղասէր ցեղերին պաշտպանելը մի ուրիշ նպատակ չունէր, բացի նրանից, որ վաճառականները այդ ցեղերի հետ առեստական յարաբերութիւններ ունէին, մատակարարում էին նրանց կենսական անհրաժեշտ պիտոյքներ և փոխարէնն ստանում էին նրանց հռվուական արդիւնաբերութիւնը, որպէս էին իւզ, սկանիր, բուրժ և անասուններ: Ճատ պարզ է, որ քուրդերի կողոպտուելը թուրք կառավարութեան պաշտօնատարներից լինասում էր հայ վաճառականների, հայ կապիտալիստների շահերին, որովհետեւ քրդերը միշտ նրանց փողի պարտականութիւն ունէին:

Այդ յարաբերութիւններն ստեղծեցին հայերի և քրդերի մի քանի ցեղերի մէջ սերտ հաւատարմութիւն, որ աւելի բարեկամական կերպարանք էր ստանում, որքան թուրքերը նեղացնում էին նրանց: Բայց կային հայերին և թշնամի ցեղեր: Այս վերջինները նոյնքան թշնամի էին հայերի հետ, որքան իրանց հարազատ ազգակիցների հետ: Սակաւ չէր պատճառ, որ քրդի մի ցեղ յարձակ գում էր միւսի վրայ և կողոպտում էր նրան. և այսպիսով կուր, կոտորածը, անհաշտութիւնը նրանց մէջ մը-

Նում էր որպէս ժառանգութիւն և անցնում էր սերունդից սերոնդ:

Այդ կոխների մէջ խառնվում էին և հայեր: Աղքակայ, ծատախի, Բուլանըխի, Մոկաց երկրի և Սասոնի հայերը ունէին իրանց դաշնակից քուրդ ցեղեր, որոնց հետ միացած շատ անգամ կռվում էին ընդհանուր թշնամու հետ: Ոչ-մահմեղական, այլ «եղբդի» աղանդին պատկանող քրդերը, միշտ հալածուած լինելով իրանց մահմեղական ցեղակիցներից, հայերի հետ պահպանում էին բարեկամական յարաբերութիւններ: Հայերն այն աստիճան հաւատարմութիւն ունէին դէպի այդ ցեղը, որ իրանց անհասունները յանձնում էին դրանց հովիւններին պահելու, հայերի տան սպասաւորները, աղախինները, երկրագործական մշակները մեծ մասամբ եղբդիներ էին: Դրանք կատարում էին հայերի մի քանի կրօնական արարողութիւնները, պահում էին ո. Սարգսի, ո. Գէորգի պատերը, զոհ էին մատուցանում հայոց նշանաւոր ուստատեղիններում, և ո. Գրիգոր Լուսաւորչին ու Գաւիթմարգարէին համարում էին Աստուծոյ ընտրեալների ամենազլիսաւորը: Եղբդինները համարեա բոլորը զիտէին հայերէն խօսել և մեր վարդապետներից մէկը միան, (որ հայ կղերից ծաղրական մաքով ստացաւ «հրաշգործ» տիտղոսը) մտածեց եղբդինների մէջ տարածել Լուսաւորչական կրօնը և գրագիտութիւն հայոց այբ-բենարանով:

Քրդերի և հայերի յարաբերութիւնները այս դրութեան մէջ էին մինչև վերջին ուստ-թրբական պատերազմի ծագելը:

Պատերազմի ժամանակ թուրքաց կառավարութիւնը, նրան բոլորովին կրօնական բնաւորութիւն տալով, շէխերի, մուֆթինների և դագինների ձեռքով կարողացաւ

վառել քրդերի ֆանատիկոսութիւնը: Եւ այն բոլոր քուրդ հրոսակները, որ հազարներով դիմում էին Տէր-Ղուկասովի գունդերի դէմ,—բոլորը կռվում էին իրանց հոգեռականների առաջնորդութեամբ, որպիսիններն էին՝ Ճէլա-Ճէլալէդինը և Ճէլա-Իրագուլահը:

Թէկ պատերազմի ժամանակ քուրդ հրոսակները մի նշանաւոր օգուտ չկարողացան բերել, թէկ նրանք կողպատում էին, այրում էին և աւերակ էին դարձնում բուն թուրքաց երկրները, որոնք դեռ գրաւուած չէին ուստամենայնիւ այդ բարբարոսութիւնները դարձրին քրդերի վրայ անզլիսական ագէնտների ուշադրութիւնը, որոնք հայաստանում տարածուած էին թուրքաց բանակների մէջ: Անզլիսացիք զտան հայաստանում երկու զլսաւոր ցեղեր, որոնցից մէկը, քրդերը ատում էին «գեաւուրներին» և խառնուեցան թիւրքաց զօրքերի հետ, իսկ միւսը, հայերը համակրում էին «գեաւուրներին» և ամեն հնարքներ գործ էին դնում հեշտացնելու ուստաց յաղթութիւնները: Քրդերի հակակրութիւնը և հայերի համակրութիւնը դէպի ուստաները, — այդ երկու հակառակ արտայայտութիւնները բաւական էին մի սխալ զաղափար տալու անզլիսացիններին, յօրինելու այն պլանը, որ նոր բանք նպատակ ունէին կազմել հայաստանի վերաբերմամբ:

Բայց Անզլիսացիք չուզեցին մտածել, որ (եթէ թուրքաց հայերը համակրութեամբ էին վերաբերվում դէպի ուստաները, այդ ունէր իւր ընական պատճառները. նրանք նեսնում էին իրանց աղզակիցներին ուստական հայաստանում աւելի բարեբախտ վիճակի մէջ, մինչդեռ իրանք օրստօրէ մաշվում և ոչնշանում էին մի անկարգ և նեն-

կառավարութիւնը փոխուէր դէպի լաւը, անտարակոյս,
հայերը կը հաշտուէին նրա հետ:

Քայլց հայերի վիճակը շատ չէր հետաքրքրում անգ-
լիացիներին. նրանց մի ուրիշ բան էր հարկաւոր: — Նր-
անց հարկաւոր էր մի զօրաւոր պատնէշ, որ կանգնե-
ցնէին ոռուսների առջև, փակէին նրանց ապագայ աշխար-
հակալութիւնների ճանապարհը դէպի չայաստան, թոյլ
շտարով նրանց մօտենալ եփրատի հովիտին, որով իրանց
Հնդկաստանի շահերը պահպանած էին համարվում: Եւ
այդ պատնէշը, անգլիացիների կարծիքով, կարելի էր
կառուցանել միմիայն. քրդերից, որովհետեւ հայերին հա-
ւատալ և հայերի վրայ յոյս դնել նրանք չէին կարող,
մանաւանդ որ քրդերին աւելի ընդունակ էին դժուամ
իրանց նպատակների համար. քրդերը իրանց ձեռքում
գէնք ունէին, իսկ հայերը ոչ:

Այդ էր պատճառը, որ երբ պատերազմի ժամանակ զա-
նազան հայկական քաղաքներում նշանակուեցան անգլիա-
կան կօնսուլներ, Բիկօնսֆիլդի մինիստրութեան և նրա
Կ. Պօլսի ներկայացուցչի՝ Լէարդի առաջին հոգու եղաւ
չայաստանը Քրիստոնան անունով մկրտել և քրդական
միութեան սկիզբը դնել:

Պատերազմից յետոյ անգլիական կօնսուլներն սկսե-
ցին առանձին ուշադրութիւն դարձնել քուրդ տարրի վը-
րայ, երեակայական միութիւնը նրանց մէջ կազմելու
մտքով: Սկսեցին նրանց առաջ քաշել, հայերին յետ մը-
զել. սկսեցին նրանց ցեղազեսների և շէյլերի հետ քա-
րեկամութիւն հաստատել և ամեն միջոցներ գործ դնել,
որ քրդերի անջատուած և միմեանց հետ թշնամական
յարաքերութիւն ունեցող ցեղերի ընդհանուր ուժերը մի-
ացնեն մի ամբողջութեան մէջ: Դա ոչ միայն դժուարին,
այլև անհնարին էր: Դարերով կազմուած ժառանգական

անհաշառութիւնը քրդերի հարիւրաւոր ցեղերի մէջ չէր
կարելի անգլիական քաղաքագիտութեան հրաշքով միան-
գամից անհետացնել, մանաւանդ որ վայրենի քուրդը
քաղաքագիտական նրբութեան հետ շուտով ընտելանալ
չէր կարող: Այդ բոլոր ջանքերի հետևանքն այն եղաւ, որ
քրդերը, անսնելով որ իրանց վրայ ուշադրութիւն են
դարձնում, աւելի երես առան, աւելի յանդուզն դար-
ձան, և հէնց այն ժամանակ, երբ ուսւաց բանակը
կանգնած էր Սան-Ստեֆանովի մէջ, — Խնուսի կողմերում
քրդերն սկսեցին կոտորել հայերին, իսկ Աղքակայ Բաշ-
կալէի կողմերում Ճէյլ-Իրազուլլահը ոչնչացրեց աւելի
քան յիսուն հայոց գլուզեր, և արժանացաւ Վանի միդ-
լիական կօնսուլի սիրայիր այցելութեանը:

Բիկօնսֆիլդի մինիստրութեան ընկնելուց յետոյ յի-
շեալ երեակայական պատնէշը — այդ արհեստական խար-
խուկ շէնքն ինքն իրան քայլայուեցաւ: Քրդական միու-
թեան գաղափարը օդի մէջ ցնդուեցաւ, բայց Քրդաս-
տան անունը մնաց. Անգլիացիք չկարողացան իրանց թը-
քածը յետ լիզել:

Երբ Բերլինի վերջին կօնգրէսի սեղանի վրայ գրուե-
ցան Ցունաստանի և Զերնօգօրիայի խնդիրները, և երբ
Կ. Պօլսի եւրոպական դեսպանները ներկայացրին Բ. Դը-
ռանը իրանց միաբան գրութիւնը չայաստանի վերանո-
րոգութիւնների մասին, այն ժամանակ թուրքաց կառա-
վարութիւնը ակամացից յիշեց քրդական միութիւնը, որ
Բիկօնսֆիլդի մինիստրութեան ծնունդն էր: Ասում ենք
ակամացից, որովհետեւ թուրքաց կառավարութեանը շատ
հաճելի չէր կարող լինել այդ միութիւնը, որի բաժան-
ման մասին ինքը շատ տարիներով աշխատած էր, ար-
հեստական կերպով անհաշտութիւն սերմանելով քուրդ
ցեղերի մէջ, որպէսզի նրանց միաբանութիւնը խանգա-

ըէ, նրանց ուժերը թուլացնէ և այդպիսով հպատակ և հարկատու ժողովուրդ դարձնէ:

Բայց պէտք էր հաշտուել հանգամանքների հետ, քաղաքականութիւնն այդ պահանջում էր. պէտք էր Եւրոպային մի խրտուիլակ ցոյց տալ:

Այդ ժամանակ, որպէս սկզբում յիշեցինք, թուրք մամուլը մի կողմից սկսեց վառել քրդերի խաւար ֆանատիկոսութիւնը, միւս կողմից հոչակել նրանց քաղաքակրթական արժանաւորութիւնները, նրանց գրականութիւնը, դպրոցները, արհեստը և այն, որոնց բոլորը միայն «Հակիկաթի» և «Վակիթի» երևակայութեան մէջ գոյութիւն ունէին: Թուրք մամուլն սկսեց նաև դատապարտել «վայրենի» հայերին, որոնք «բարբարոսաբար» հարստահարում էին «խեղճ» քրդերին, այլ խօսքով, — սկսեց բողոքել գառների դէմ, որ գիշատում էին գայլերին...

Դեռ Բ. Դուռը չէր տուած դեսպանների միաբան գրութեան պատասխանը Հայաստանի վերանորոգութիւնների մասին, յանկարծ Կ. Պոլսում յայտնուեցան քուրդ պատուիրակներ, իբր Շէյխ-Իրադուլլահի *) կողմից ու-

*) Շէյխ-Իրադուլլահը, Թէւրքիայի քրդերի այդ կեղծ ներկայացուցիչը, իսկապէս պարսից հպատակ մի քուրդ ցեղի չէսնէ, այսինքն մօլան կամ հոգեորականը: Նա ինքը և իւր ցեղը թափառում են պարսից՝ երբեմն Ուլնիի, երբեմն Թար-գաւառի և երբեմն Մար-գաւառի կողմերում: Ուսւ-թրքական պատերազմի ժամանակ Բայազէտի վրայ յարձակուող քուրդ հրոսակներից մէկի առաջնորդն էր նա: Այստեղ նշանակութիւն ստացաւ և թուրքաց կառավարութեան ուշադրութիւնը դարձրեց իւր վրայ, Այն ժամանակ, երբ Կ. Պոլսում յայտնուեցան իբր նրա կողմից պատուիրակներ, նա Պարսկաստանումն էր և գուցէ ամենաին տեղեկութիւն չունէր, որ իւր անոնով

դպրկած (բայց իսկապէս թիւրքաց մայրաքաղաքի մէջ սարքուած), որոնք ներկայանալով Արէդին-վաշային, պահանջում էին քրդերի և Քրդստանի (անունը փոխած Հայաստանի) համար ինքնավարութիւն:

Ի՞նչ էր նշանակում այդ աշքակապութիւնը:

Հարցը շատ պարզ է: Խօսքը Հայաստանի (թիւրքերի հայեացքով Քրդստանի) ինքնավարութեան և նրա վերանորոգութիւնների վրայ էր: Եթէ պէտք էր տալ այդ երկրին ինքնավարութիւն, ինչու չտալ քրդերի անունով, որոնք այդ երկրի տէրն էին, որոնք այդ երկրի նախկին բնիկներն էին և որոնք իրանց կուլտուրայով (?) բարձր էին միւս բոլոր ազգաբնակութիւններից, առաւելապէս հայերից...:

Եւրոպական դեսպանները, ի հարկէ, ուշադրութիւն շդարձին Արէդին-վաշայի այդ Փօկումների վրայ և քուրդ պատգամաւորութիւնը ոչինչ հետևանքի չհասաւ:

Դրանից յետոյ ալբանական միութեան հեղինակը՝ Արէդին-վաշան, սկսեց քրդական միութեան վրայ երազել: Այդ միջոցին թուրք մամուլը, հետևաբար, իւր խօսքը փոխել սկսեց: Այժմ քրդերին մի կուլտուրական, գարգացած, խաղաղատէր և բարոյական ժողովուրդ ներկայացնելը շատ ձեռնտու չէր կարող լինել: Նոյնիսկ ձեռնտու չէր ասել, թէ քրդերն այն աստիճան բարի, առաքինի և խեղճ են, որ հարստահարվում են «վայրենի» հայերից: Պէտք էր ներկայացնել նրանց որպէս անգութզականներ, որպէս բարբարոս ֆանատիկոսներ, որոնք

բանակցութիւններ են լինում Բ. Դուռն հետ: Յետոյ տեսնում ենք, որ Շէյխ-Իրադուլլահը Պարսկաստանի Սովորդ-Բուլաղ գաւառումն է սկսել իւր անկարգութիւնները:

պատրաստ են մի բովկում ոչնչացնել բոլոր հայերին, եթէ նրանց ինքնավարութեան վրայ խօսք լինէր։ Այդ բոլորի մէջ այն միտքը կար, որ Եւրոպային ցոյց տային, թէ Բ. Դուռը հակառակ չէ Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելու առաջարկութեանը, և նա ինքը շատ է ցանկանում կատարել այդ, բայց նա ունի իւր առջև մի մեծ դժուարութիւն և այդ դժուարութիւնը կայանում է քրդերի և առհասարակ մահմեղական ամբոխի մոլեռանդութեան մէջ, որոնց կրօնին և սովորութիւններին հակառակ է ամեն մի վերանորոգութիւն։ Կամենում էին ցոյց տալ, որ եթէ կառավարութիւնը մահմեղական ժողովրդի կամքի հակառակ գնար, կարող էր պատճառ տալ մի մեծ կոտորածի քրիստոնէից դէմ, որի համար Բ. Դուռը դժուարանում էր իրան պատասխանառու համարել։

Թէ որքան խարէական էին այդ ենթագրութիւնները, կարող է հասկանալ ամեն մի մարդ, որ փոքրի շատէ տեղեկութիւն ունի ասիական Թիւրքիայի դրութեան վըրայ։ Մահմեղականներն այդտեղ նոյնքան ճնշուած են, նոյնքան հարստահարստած անկարդ կառավարութիւնից, որքան քրիստոնեանները։ Մահմեղականներն աւելի ևս ցանկանում են մի բարւոր կառավարութիւն, և որքան ապացոյց կարող է լինել դեռ չզսպուած Մունթէֆիկ արաբների ապստամբութիւնը, Ղօղան-Փաղլինների ապստամբութիւնը և այն վերանորոգութիւնները, որ պահանջում էր Միդհատ-փաշան Սիրիայի համար, և որ յամառութեամբ մերժուեցաւ Բ. Դռնից։

Մահմեղական մոլեռանդութիւնը մի խրտութակ է, ոռով Բ. Դուռն աշխատում է միշտ վախեցնել Եւրոպային։ Այնքան խօսփում է Հայաստանի վերանորոգութիւնների, Հայաստանի ինքնավարութիւններին, այնքան բայց մոլեռանդութիւնը մասին, այնքան բայց մոլեռանդութիւնները, որ պահանջում էր Միդհատ-փաշան Սիրիայի համար, և որ յամառութեամբ մերժուեցաւ Բ. Դռնից։

տրութիւններ են տրվում Բ. Դռան կողմից, բայց որքան հայկական լեռների վայլերը տեղեկութիւն ունին այդ բոլոր բանակցութիւնների մասին, նոյնքան տեղեկութիւն ունի քուրդ ժողովուրդը։ Այդ բոլորը խօսփում, շինվում, սարքում են Կ. Գօլոսում։ Քուրդին ինչով կարող են հետաքրքրել Հայաստանի ինքնավարութիւնը կամ այնտեղ մտցնելիք վերանորոգութիւնները։ Նա ոչ լրագիր է կարդում և ոչ դիտէ, թէ ինչ է կատարվում իւր բնակած լեռների միւս կողմում։ Այսուամենայնիւ Բ. Դռանը նպաստաւոր էր ցոյց տալ մի քողական միութիւն։ Եթէ նա գոյութիւն չունէր, պէտք էր յայտնել, թէ կարող է կազմուել, որպէս այդ ենթագրում է «Օսմանի» լրագիրը։

Արգեօք կարող է կազմուել. ահա այդ հարցը պարզելու համար մենք հարկաւոր ենք համարում մի փոքրիկ գաղափար տալ, թէ ինչ տեսակ ժողովուրդ է քուրդը։

Նախնական ժողովուրդներից, որոնք մնացել են արևելքում, չկայ մէկը, որ քրդերի նման պահպանած լինի կենցաղավարութեան այն ձևերը, որով ապրում էին հովիւններն իրանց նահապետական դարերում։ Եւ արևելքում չկայ մի ժողովուրդ, որ քրդերի նման բաժանուած լինի այնքան բազմաթիւ ցեղերի։ Միայն Վասպուրականի մէջ կարելի է հաշուել միմիայն 120 միմեանցից տարբեր ցեղեր, որոնք զանազանիվում են բարբառներով, սովորութիւններով և մինչև անգամ կրօնով։ Այդ ցեղերը ընդհանուր ոչինչ չունին, նրանց չէ միացնում որևէ հասարակական կապ, ամեն մի ցեղ առանձնացած է իւր մէջ, ապրում է իւր նեղ, սահմանափակ կեանքով։ Մի ցեղի շահերը շօշափելով միւսին, պատճառ է տալիս նըրանց մէջ անհաշտ ժշնամութեան. սխակալութիւնը, ա-

լեան վրէժինդրութիւնն անցնում է նրանց մէջ սերունդ:
դից սերունդ:

Որպէս խաչնարած և հովիւ ժողովուրդ, քրդերը
մինչև այսօր չսովորեցան հաստատաբնակ կեանքին: Նը-
րանց հայրենիքն այնտեղ է, որտեղ նրանց անասունների
համար արօտ կայ: Այդ ոլատճառով ամբողջ տարի գաղ-
թում են մի երկրից դէպի միւսը:

Գարունը, ամառը և աշունը անց են կացնում հայ-
կական լեռների վրայ, իսկ ձմեռը գաղթում են դէպի
աւելի տաք երկիրներ, որպիսի են Դարմեանի, Հեքարիի
գաւառները, Տիգրիսի արևելան ափունքի գաշտավայրե-
րը, կամ Միջագետքի անապատի տափարակները: Կան
այնպիսի ցեղեր, որոնք ձմեռը մնում են չայտա-
նում, տարածվում են հայոց գիւղերում և հայոց տը-
ների մէջ հիւրասիրութիւն են գտնում: Բուն քրդա-
կան գիւղերը, որոնք խիստ սակաւաթիւ են չայտ-
առանում, ներկայացնում են մի կարգ գետնափոր խըր-
ճիթներ, և տարուայ երեք եղանակներում դատարկ
են լինում: Միայն ձմեռը կարելի է նրանց մէջ բնա-
կիչներ գտնել, որոնք իրանց անասունների հետ խը-
րուդների նման պատսպարփում են մթին, գեռնա-
փոր խորշերում և անհամբերութեամբ սպասում են
գարնանը, որ դուրս գան իրանց որջերից:

Ամբողջ չայտառանում չէ կարելի ցոյց տալ մի
քաղաք, որ գոնէ մի հատ քուրդ բնակիչ ունենայ:
Ի՞նչ պէտք է անէ քուրդը քաղաքում: Նա արհեստ
չգիտէ, վաճառականութեամբ չէ պարապում, խանութ-
չունի, ծառայութեան մէջ չէ մտնում: Քուրդը հովիւ
է, նրա բնակութեան տեղը՝ լեռները, ձորերը և անա-
պատներն են:

Թուրք կառավարութեան բոլոր զանքերը, քրդե-

րին հաստատաբնակ անելու մասին, անցան ապարդին:
Թուրք կառավարութիւնը ամեն հնար գործ է դնում,
որ քրդերը կալուածատէր լինին, պարապեն երկրա-
գործութեամբ: Բայց քուրդը հող չէ սիրում. հողը կա-
րող է կապել նրան երկրի հետ. մինչդեռ նա ցանկա-
նում է աղատ լինել, գաղթել և անդադար գաղթել:
Աւազակը մէկ տեղում երկար կանգնել չէ կարող:

Քրդերի գիւղերը, ինչպէս ասացինք, չայտառանում
շատ փոքրաթիւ են, այն ևս ձմեռուայ բնակութեան հա-
մար: Այդ գիւղերը, ինչպէս որ շուտով հիմնում են նրանք,
այնպէս էլ շուտով քանդում են և թողնում են աւերակ:
Քրդերի գիւղերը և նրանց շարժական «օրաները» ոչըն-
չով չեն զանազանվում միմեանցից: Տեսնում ես քրդերի
մի խումբ իւր «ալաշուղները» (տաղաւարները) կազմում
է մի ձորի մէջ, մնում է այնտեղ, որքան ժամանակ ա-
նասունների համար ճարակ կայ, հէնց որ վերջացաւ, հա-
ւաքում է «ալաշուղները» և տեղափոխվում է մի ուրիշ
ձոր: Այսպէս էլ նա հիմնում է իւր «ղջազները»
(ձմերանոց). փորում է գետինը, ծածկում է թուփերով
և մացառներով, և ահա նրա խրճիթը պատրաստ է. միւս
ձմեռ քուրդը թողնում է նրան և մի այլ տեղ է շնում
նրա նման մի բան:

Քրդերը չայտառանում (մամնաւոր բացառութեամբ)
կալուածքներ, անշարժ սեպհականութիւն չունին: Եթէ
նրանք ունին մի կտոր հող, տալիս են հայերին մշակե-
լու համար: Հանգամանքները երբեմն ստիպում են նը-
րանց թողնել բնակած երկիրը. այնուհետև նրանք այն-
քան հեշտութեամբ մոռանում են իրանց հողերը, որքան
հեշտութեամբ ձեռք էին բերել նրանց:

Այս բոլորից պարզ երևում է, որ քրդերը հայրենիք
չունին. նրանք ոչնչով կապուած չեն չայտառանի հետ:

Դրանով պէտք է բացատրել քրդերի անդադար գաղթականութիւնը Պարսկաստանից դէպի Թիւրքիա, և Թիւրքիայից դէպի Պարսկաստան:

Քրդերը երբէք չեն եղել բարեկամ թուրքերին և լինել ևս կարող չեն: Վերջն ռուս-թուրքական պատերազմի ժամանակ թէ և աւարառութեան նպատակով քըրդերից մի քանի խմբեր խառնուեցան թուրքաց բաշիրուզուկների հետ, բայց հէնց որ թուրքերը յաղթվում էին, քրդերը առաջինն էին լինում, որ սկսում էին կողոպտել նրանց բանակը: Թուրքը զինուորների ամենաընտիր զէնքերը, որ ստացել էին անգլիացոց չնորհիւ, մեծ քանակութեամբ անցել էին քրդերի ձեռքը և վաճառվում էին Պարսկաստանում ամենաչնչին գներով:

Միապ է և այն կարծիքը, որ առհասարակ տարածուած է քրդերի մասին, իբր թէ նրանք մի քաջ ժողովուրդ են: Քրդերը, ինչպէս միւս վայրենի ցեղերը, այն քաջութիւնը չունին, ինչ որ հասկացվում է այդ բառի բուն նշանակութեամբ: < Իսկապէս քաջ լինելու համար պէտք է գիտակցաբար ոգեսորուած լինել որենցէ գաղափարով: > Բայց քուրդը իդէալ չունի: Ի՞նչը կարող է գըրդել նրան արիւն թափելու, բացի յափշտակասիրութեան ըղձից: Իսկ մի այդպիսի քաջութիւն՝ զազանի քաջութիւն է, երբ որսի հտեսից է ընկնում: Եթէ մի անդամ յաղթվում է քուրդը, մի անգամ ջարդ է ուտում, այնուհետև նա կորցնում է իւր բոլոր արիութիւնը:

Այսօն դարերի ընթացքում քրդերը չայաստանում չկարողացան մի հասարակութիւն ստեղծել, հաստատ հիմք դնել և իրանց շահերով կապուած լինել այդ երկրի հետ: Քրդերը չայաստանի քաղաքացի չեն: Նրանք նոյնպիսի թափառական խմբեր են, որպէս այդ երկրի բօշաները, զազաները, թուրքմէնները, չերքէները և այլ վայ-

րենի ցեղերը, որոնք այսօր այստեղ են, իսկ միւս օրը նըրանց հետքն անգամէ երկում: Այս բոլորից շատ պարզ է, թէ նրան իրագործելի է այն գաղափարը, որ կոչվում է քրդական միութիւն:

Քրդական միութիւն չայաստանում կազմել անկարելի է. բայց մի բան կարող է պատահել, թուրք կառավարութեան ներկայացուցիչները կարող են գրգռել քրդերի զանազան ցեղապետներին, այս և այն չէլիսին, որ կողոպտեն հայոց գիւղերը: Քրդերն այդ յանձն կառնեն, երբ նրանց թոյլ է տրվում անպատիժ աւազակութիւն գործել: Նրանք կըսկսն չայաստանում կողոպտել, այրել, սպանել, և այդ բոլոր բարբարոսութիւններն Կ. Պօլսում կըտան քաղաքական կերպարանք: Դեռ անցեալ տարուայ (1879) աշնան ժամանակ Ճէյխ-Իրագուլան անցնելով Պարսկաստանի սահմանից թուրքաց հողի վրայ, Աղբակայ և Բաշ-Կալէի գաւառում կըկին ոչնչացրեց մինչև քսան հայոց գիւղ: Այդ մի պարզ ասպատակութիւն էր, որ համարեա ամեն տարի պատահում է չայաստանում, բայց Կ. Պօլսում նրան տուին քաղաքական բնաւորութիւնն:

Նոյնը կարող է պատահել և այսուհետև: Թուրքաց կառավարութեան ներկայացուցիչները գաղտնի կերպով կըգրգռեն քրդերին հայերի դէմ, կոտորած կըսկսուի. Իսկ Կ. Պօլսում թէ Բ. Գուռը և թէ թուրք մամուլը կըսկսեն գոչել՝ ահա քրդական միութիւնը. տեսաքը, այդ բոլոր կոտորածը չայաստանին ինքնափարութիւն և հայերի համար արտօնութիւններ պահանջելու համար է: Մինչդեռ քրդերն ինքնափարութեան և չայաստանի վերանորոգութիւնների մասին ոչնչ գաղափար չունին, և հասկանալ անգամ չեն կարող, թէ ինչ բան է վերանորոգութիւնը: Նրանք կըկատարեն իրանց բարբարոսութիւնները՝ ինչպէս

միշտ, լոկ յափշտակասիրութեան նապատակով, բայց թուրքաց կառավարութիւնը կըտայ նրանց քաղաքական նպատակ:

Թէ այսպէս և թէ այնպէս, զանագանութիւնը մեծ չէ.—քուրդն արդեօք գիտակցարար կըդործէ, թէ մերենաբար, բոլորը միւնոյն հետևանքին կըհասնեն, որ չայաստանում կոտրած տեղի կ'ունենայ: Փաստեր արդէն կան: Երէկ մի հեռագիր կար, որով Վանի անգլիական կօնսուը իմացում է տալիս Կ. Պոլիս, թէ քըրդերը ոչնչացրին հայոց 13 գիւղ:

Հարցնում ենք, ի՞նչ պէտք է անեն այդ գէալքերում հայերը: Մինչև հիմա երբ քըրդերը կողոպտում էին, այրում էին, սպանում էին, հայերը գիմում էին թուրքաց կառավարութեանը և դատաստան էին պահանջում: Բայց հիմա, երբ կառավարութեան ներկայացուցիչներն իրանք են դրում քըրդերին բարբարոսութիւններ գործել, էլ մում կարող են դիմել հայերը: Մեզ կըպատասխանեն, թէ Եւրոպային, որ յանձն է առել հսկել չայաստանի բարեկարգութիւնների վրայ: Բայց մինչև Եւրոպան կըքննէ, կըտեղեկանայ չայաստանում գործուածները, մինչև օդնութեան ձեռքը կըհասցնէ (կըհասցնէ արդեօք), ինչպէս սում են՝ «ջուրը կըգայ, ջրազացը կըտանէ»...:

Հայերն այժմ լաւ են հասկացել այդ: Հասկացել են, որ հասել է մի վճռական բովլէ, երբ կամ պէտք է յանձնն առնել ստրկաբար ոչնչանալ, կամ եթէ ցանկանում են իրանց գոյութիւնը պահպանել, հարկաւոր էմիացած ուժերով ընդդիմադրելքը վայրենի յարձակումներին: Ուրիշ ճարշկայի վայրենի յարձակումներին: Ուրիշ ճարշկայի վայրենի յարձակումներին: Այդ իսկ պատճառով կազմուեցան հայերից զինեալ խըմբեր, որոնց նպատակն է ոչ թէ ապատամբութիւն, ոչ թէ պատերազմելթուրքաց կառավարութեան դէմ, այլ պատժելքը դերին, եթէ նրանք յադգնեն խոռվել երկրի խաղաղութիւնը և

կողոպտել անգին հայ գիւղացիներին: Այդ զինեալ խմբերը, որոնց թիւը փոքր չէ, չքում են հայկական լեռների վրայ, դիտում են շարժումը և ամեն տեղ վրէժխնդիր են լինում, երբ նկատում են քըրդերի կողմից որևիցէ անգըթութիւն:

Հայոց զինեալ խմբերը մինչև անգամ պաշտպանում են քըրդերի խաղաղասէր ցեղերին, երբ պատահում է այս վերջններին ենթարկուել իրանց ցեղակիցների բարբարոսութեանը: Այդ իսկ պատճառով քըրդերից շատերը միացած են հայերի հետ և աւելի բարոք են համարում կրուել ընդհանուր թշնամու դէմ, քան թէ վնասել հայերին, որոնցից միշտ օգնութիւն և հաւատարմութիւն են վայելած:

Հայոց զինեալ խմբերի հետ միացել են երևելի Մար-Շիմօնի քաջ ասորիները: Մար-Շիմօնը, Զօլամերիկի լեռների այդ հզօր իշխանը և պատրիարքը չէր կարող մոռանալ այն հին և սոսկալի հարուածը, որ նախորդ Մար-Շիմօնի *) ժամանակ Բօտանի բռնակալ Բաղիր-խանըէլ անունով քուրդ ասպատակը հասցրեց պատրիարքի տանը՝ իսպառ կողոպտելով նրան և կոտորելով մինչև տասն հազար ասորի: Այն օրից քըրդերի և Մար-Շիմօնի ցեղի մէջ շարունակվում է մի անընդհատ թշնամութիւն, որ շատ անգամ պատճառ է տալիս արիւնահեղ կուիների: Դեռ երկու տարի առաջ, երբ քըրդերը ասպատակեցին Զօլամերիկի մի քանի գիւղերը և արօտից տարի առան պատրիարքի ջորիների երամակը, ասորիների Տէր-Սկանակում է Տէր-Սկան:

*) Նեստորական ասորիների պատրիարքական աթոռը ժամանակական է. բոլոր պատրիարքները յաջորդաբար ընտրում են միւնոյն տանից և կոչվում են Մար-Շիմօն, որ նշանակում է Տէր-Սկան:

ըլ այդ ժամանակ սաստիկ ջարդ տալով քրդերին՝ յետ խեցին կողոպուտը: Ունենալով անդառար ընդհարումներ քրդերի հետ, Մար-Ճիմօնը հէնց խաղաղութեան ժամանակներում միշտ պատրաստ ունի մինչև 30—40 հազար զինեալ մարդ. իսկ այժմ ամբողջ Զօլամերիկի թէ հայերը և թէ ասորիները զինուած են:

Ընցեալ ձմեռուայ սովը, իւր սարսափելի հետևանքների հետ, միևնոյն ժամանակ սաստիկ նպաստեց հայերի այժմեան շարժմանը: Սովի ժամանակ հայերը պարզապէս տեսան թուլք պաշտօնատարների չարամառութիւնը, որոնք ամեն նենգաւոր միջոց գործ էին դնում, որքան կարելի է բազմացնել հայ սովամահների թիւը: Այդ ժամանակից հայերը աւելի խորին կերպով համոզուեցան, որ Թուլքիան նպատակ ունի խսպառ բնաջնջ անել հայկական տարրը: Այդ ժամանակից ծագեց հայերի մէջ անձնապաշտպանութեան զգացմունքը:

Սովը ունեցաւ իւր և ուրիշ օգուտները. նա կապեց բարոյապէս ամբողջ հայ ազգի սրտերը, որոնք աշխարհի ամենահեռաւոր անկիւններից սկսեցին թափել այնտեղ իրանց առատ նուէրները: Սովը հաշտեցրեց հայերի հետ մի քանի քուրդ ցեղեր, որոնք հաւասար օժանդակութիւն էին ստանում հայոց մամնաժողովներից, որոնք Հայաստանի բոլոր քաղաքներում կազմուած էին սովատանջներին օգնելու նպատակով: Վերջապէս սովի պատճառով ներկայ տարուայ զարնանը մշակների ահազին բազմութիւն՝ Վանի, Մուշի, Բաղէշի և Հին-Բայազէտի կողմերից անցան դէպի Ռուսաստան և տարածուեցան Անդրկովկասի բոլոր գաւառներում: Այդ մշակները՝ այժմ լսելով Հայաստանի վտանգը, խմբերով վերադառնուած են դէպի իրանց հայրենիքը:

Թուլքաց հայերի այժմեան շարժումն իրական փաստ

է. Նա դարեսոր տիսուր հալածանքների մի ազդու հետեւնքը է. Նա պատմական անհրաժեշտութիւնների մի սոսկալի արտայայտութիւն է: Թիւլքիան կարող է զսպել այդ շարժումը նրանով միայն, երբ կատարէ հայերի իրաւացի պահանջը: Բայց քանի որ՝ հայկական խնդիրը մեղնելու նպատակով, Թուլքիան կ'աշխատէ քրդական միութիւն հնարել, դրանով աւելի ևս կըբորբոքէ հայերի արդար կատաղութիւնը....:

ቁ በ ክ ሻ ጥ ስ ዓ ቁ በ ክ ሻ ጥ ስ ዓ

Տարօնն ու Վասպուրականը թէկ Տաճկաստանի մի
մասն են կազմում, բայց քրդերի զանազան ցեղերը, օ-
գուտ քաղելով սուլթանի պետութեան թուրութիւնից,
տիրում են Հայաստանի այդ երկու ամենամեծ նահանգ-
ներին՝ սկսեալ Սև ծովի հարաւ-արևելեան եզերից, Եփ-
րատ գետից, մինչև Միջագետքի և Պարսկաստանի սահ-
մանները:

Յիշեալ նահանգները պարունակում են իրանց մէջ հետևեալ գաւառները՝ Հաքարի, Բայազէդ, Հաղբակ, Վան, Բաղէշ (Բիթլիս), Մուշ, Ջատախ, Սասով, Խիզան, Մոգաց երկիր, Զարսանջակ, Քեղու և այլն, որոնց տիրում են քրդերը:

Մնացեալ ազգաբնակութիւնները, բացի քրդերից,
ևն՝ հայեր, ասորիներ, հրեաներ, թուղթեր, եղիդիներ,
և զանազան թափառաշրջիկ ցեղեր։ Հայերը իրանց թուով
բազմութիւն են կազմում, և համարեա, բարկացնում
են ամրող ազգաբնակութեան կէսից աւելի մասը։

Որպէսզի գիտենամք, թէ ինչ դրութեան մէջ են
այդտեղ հայերը, պէտք է նախ ծանօթանալ տի-

բող աղպի՝ քրդերի բնաւորութեան և նրանց քաղաքական կազմակերպութեան հետ։
Քրդերը բաժանուած են զանազան ցեղերի, որոնց գլխաւորներն են՝ Մուքուրի, Թակուրի, Միլանցի, Հայտարանլի, Ջաւի, Զալալի, Ռավանդ, Բիլբաստ, Մամբրանի, Հարթօչի, Շիկալ, Հարքի, Եազիդի։ Դրանք շատ քիչ են զանազանվում յատկութիւններով և սովորութիւններով. խօսում են մեզական լեզուով, որ իւրաքանչիւր ցեղի մէջ որոշվում է բարբառների առանձնայատկութեամբ։ Կրօնով մահմեղական են՝ սուննի աղանդից։ Միայն եղիդիները բաժանուած են կրօնով, որոնք պաշտում են չար և բարի ողիները, երկրագութիւն են տալիս տնային օջախին։ Դրանք գուցէ մնացորդներ են Արամագդի և Արհմենի հին երկրապատճերից, որոնց մէջ մինչև այսօր երևում են մովական ծէսեր։

Քրդերը չունին զիր և զբականութիւն, չէլլարը
(դեսպեաները) միայն գիտեն արաբերէն կարդալ, որով
աւանդում են ժողովրդին իրանց կրօնի հրահանգները,
որոնք բովանդակվում են մի քանի՛ պարզ և թեթև, ար-
տագին ծիսակատարութիւնների մէջ։ Միակ բանը, որ
զիտէ ամեն քուրդ իւր հաւատքի հանգանակից, է նա-
մազը, որ նա մեքենաբար և ճիշտ կերպով կատարում
է նշանակեալ ժամերում, առանց հասկանալու, թէ ինչ
են նշանակում իւր՝ այնքան զերմեռանդութեամբ ար-
տասանած արաբական բառերը։ Բացի զբանից, քուրդը
զիտէ մեծ մարդարէիւ—Մուհամմէդի անունը, և նրա
նախկին խալիֆաների՝ Օմարի, Օսմանի, Աբու-Բաքրի ա-
նունները, և աւելի ոչինչ։

Բայց ժողովրդական անդիր բանաստեղծութիւնը կենդանի է քրդերի մէջ. Նա ծագելով ամբոխի իսկական կեանքից, ունի նոյն քնաւորութիւնը և ոգին, ո-

ըով ապրում է ինքն ամբոխը։ Հովուերգութիւնը և քաջազնական հայներգութիւնը գլխաւոր տեղն են բռնուած նրանց բանաստեղծութեան մէջ՝ առաջնը որպէս մի խաչնարած ցեղի կեանքի առշնչութիւն, երկրորդը՝ որպէս նրա պատերազմական ոգու արտայայտութիւն։ Հովուական երգերը տխուր են և մելամաղձոտ, նրանք խիստ մեղմ կերպով ներդաշնակիում են հովուի սրբնութիւնը և ձգական հնչյունների հետ։ Իսկ պատերազմական երգերը կը պատահանձնան և խրոխտ են, նրանք լիահնչիւն համարձակութեամբ որոտում են թմբուկների ձայնի հետ։

Ոչ մի նշանաւոր երեոյթ չէ կորցնում իւր հետքը քրդի կեանքի մէջ. ժողովրդական ովին իւր տաղերով կամ փառաբանում է մէկի քաջազործութիւնը, կամ պարսաւում միւսի թուլասրտութիւնը։ Եթէ թագնուի մէկը թշնամուց, կամ խոյս տայ կուուի դաշտից, միւս օրը կանայք և աղջիկները կը յօրինեն նրա մասին զանազան կծու պարաւներ, և երգը արագ կը թռչի ամեն երեխայի, ամեն չափահասի բերանից։

Թուր, մի ջուխտ ատրճանակ, փահան և նիզակը քրդի մարմնի անդամներ են, որոնք միշտ մնում են նըրանից անբաժան։ Հրացանը նա գործ է ածում մեծ կըռուիների մէջ։ Թամբած ձին, որ միշտ պատրաստ է նրա չաղրի տռչն, քրդի հաւատարիմ ընկերն է. նրան սիրում է տէրը աւելի քան իւր կնոջը, աւելի քան իւր որդիները։ Քուրդը իւր չաղրի մէջ հիւրասէր է որպէս Աբրահամ, բայց նա չի ինսայիլ կողոպտելու նոյն հիւրին, եթէ նա հանդիպէ մէկ մղոն հեռու իւր չաղրից։ Արեան վրէժինդրութիւնը, որպէս ամեն կիսավայրենի ցեղերի մէջ, նոյնպէս քրդի մէջ, անցնում է սերունդ։ Սպանուածը հանդիստ չէ իւր գերեզմանի մէջ, քանի որ

նրա արեան վրէժը չէ առնուել սպանողից, կամ նրա մօտ աղզականներից։ Սպանողն այն ժամանակ միտիան ագատ է մնուած վրէժինդրութիւնից, երբ զնում է իւր ոսուխի տունը, իւր սուրբ գցում է նրա ոտքի տակ, և ներզութիւն է ինդրում։ Բայց հաղիւ կը դանուի մի քուրդ, որ խոնարհուի մինչ այդ աստիճան ստորութեան։ Քուրդը քինախնդիր է և ոխերիմ. նա մինչև մահ չէ մուռանում վիրաւորանքը կամ անդատւութիւնը, քանի որ դեռ լիակատար բաւականութիւն չի ստացել։ Նա միենոյն ժամանակ շատ հանգամանքներում հպարտ է և աղնիւ։ Քուրդը գաղարեցնում է իւր կուր, երբ հակառակ կողմից միջամտութիւն են գործում կանայք։ Նա իրան չէ ստորացնում՝ պատերազմելով իրանից թոյլ արարածների հետ, թէս քրդի կինը կուուի ասպարէզում նոյնքան կատաղի է և քաջասիրտ, որքան իւր ամուսինը։

Կրկին անգամ ամուսնանալը՝ մեռած կամ սպանուած տղամարդից յետոյ, քուրդ կնոշ համար համարվում է նախատինը։ Նա մնում է միշտ այրի, միսիթարում է իրան այն քաղցը յիշուրութիւններով, թէ իւր այրը մի «լաւ աւազակ» էր, թէ նա մնաց միշտ մաքուր երկուութեան արատից, թէ նա երեք իւր թիկունքը չդարձրուց թշնամու դէմ, թէ նա սիրում էր իւր ամուսնուն, որքան սիրում էր իւր արարական նժոյգին, և երեք նրա սիրտը չզբաւեց ամենագեղեցիկը իւր ցեղի աղջիկներից։ Եւ մայրը պատմում է իւր զաւակներին՝ հետեւող լինել նրան և կրկին բարձրացնել հանգուցեալի յիշատակը խոր գերեզմանից։

Մանկութիւնից քուրդը կրթվում է ձիու սանձը կառավարելու, զէնք գործածելու, մարմնամարդութեան և այլ ճարպիկութիւնների մէջ։ Նա քաջազործութիւն է հա-

մարում գողանալ, յափշտակել ամեն ինչ, որ սէտք է իւր ապրուստի համար։ Նա մինչև անդամ գողանում է իւր հարմացուին։ Բախտաւոր է համարվում ամուսնութիւնը, երբ տղամարդ-հերոսը առևանդել է իւր սիրուհուն հօր ընտանիքից։ Կինը այդպիսի դէպքերում մի առանձին հպարտութեամբ է նայում իւր ընկերուհիների վրայ։

Քրդի ամենամեծ երդումը թալախի վրայ է լինում։ Նա առնում է մի քար և նետում է, ասելով՝ «թող իմ թալախն այս քարի պէս գցած լինի, եթէ այսպէս, կամ այնպէս անեմ»։ Թալախը նրա ամուսնական կապն է, նա լուծուած է համարվում, երբ նրանով երդում ուտողը երդմնազանց է լինում։ Այդպիսի երդումները պահանջվում են, երբ պէտք է որևէից գործի մէջ ամենահաստատ գրաւական մի մարդու հաւատարմութեան մասին։ Եւ այդ լինում է այն ժամանակ, երբ գործը վերաբերում է ընդհանրութեան ամենակարեւոր մի հարցին։

Որպէս բնութեան ազատ որդի, նուիրելով իրան անհոգ և պարզ կեանքի, քուրդը բաւականանում է իւր անասուններով։ Նա հովիւ է։ Նա չունի տուն և հաստատ ընակութիւն։ Նրա օթևանը իւր չաղրն է, որ կազմում է այնտեղ, ուր կարող է իւր անասունների համար ճարակ գտնել։ Զմեռուան ձիւները միայն քշում են քըրպին իւր սիրելի սարերից, այդ ժամանակ ևս մի հայի տուն միշտ պատրաստ է ընդունել ինկնակոչ հիւրին։ Անտեղ քուրդը իւր անասունների հետ անցուցանում է ձմեռը, մինչև գարունը կրկն կոչում է նրան դէպի լեռների վիրելը։

Քրդի կերակուրն է իւր անասունների կաթը, մածունը, պանիրը, սերը, կարագը և իւղը։ Նա չէ գիպշում նրանց մսին։ Քրդի հագուստը՝ ոտքից մինչև գլուխ

կազմուած է իւր անասունների բրդից և կաշուց։ Իսկ այդ բոլորը պատրաստում է նրա կինը։ Տղամարդը տընտեսութեան մէջ շատ չէ խառնվում։ Նա պատերազմական մարդ է։ Երկրագործութիւնը, արհեստը քրդի համար ստոր պարապմունքներ են, որոնց նա արհամարհում է, համարելով ույայի գործ։ Վաճառականութիւնը նրա մէջ դեռ պահպանել է իւր հին, նահապետական ձեր։ Նա տալիս է, օրինակ, քսան ոչխար և գնում է մի ձի։ Նա փոխում է իւր իւղը, պանիրը, քուրդը երկրագործի ալիւրի հետ, կամ արհեստարի շինած այս և այն գործիքի հետ։ Եւ այս բոլորը կատարում է նա չտփազանց միամտութեամբ։ ամեն առևտուրի մէջ խարվում է նա, ամեն փոխարինութեան մէջ որսում է նրանից հայ կամ հրեայ մանրավաճառը իւր շահերը։ Որովհետեւ այսպիսի յարաբերութիւնների մէջ քուրդը գործ չէ գնում իւր սուրը և մարմնական ուժը, որ նրա մէջ զարգացած են, այլ նա բանացնում է իւր հմտութիւնը և խելքը, որոնք նրա մէջ խիստ թոյլ են։

Քուրդը խաբերայ չէ։ Նա հաւատարիմ է իւր խոստմունքը կատարելու մէջ։ Վճարել այն, ինչ որ պարտը է առած և կողոպտել ուրիշի սեպհականութիւնը—երկումն էլ մի օրինակ սուրբ են նրա համար։ Առաջինի մէջ նա պահպանում է իւր պատիւը և խօսքը, իսկ երկրորդի մէջ՝ իրաւունքը և արդարութիւնը։ որովհետեւ քրդի համար ոչինչ ընդգէմ չէ իրաւունքի և արդարութեան, երբ նա սեպհականացուցած է սրի և յաղթութեան ուժով։ Սուրը և յաղթութիւնը արդարութեան կըշիռն է։ Նրա և իւր հակառակորդի մէջ։

Այդպէս է վարփում ամեն մի աւազակ։ այդպէս է վարփում ամեն մի հասարակութիւն, որ նոյն ընաւորութեան ուժով։

թիւնն ունի, այդպէս է վարկում և մի ամբողջ պետութիւն,
որ աւազակի դեր է կատարում...:

Այսքանը բաւական համարելով քրդի ընաւորութեան
և ընտանեկան կենցաղավարութեան մասին, դառնանք
այժմ դէպի նրա քաղաքական կեանքի կազմակերպու-
թիւնը:

Քրդերի ցեղերը կառավարվում են իրանց էլ-ա-
ղասիների (ցեղապետների) և շէյխերի (գենալետների)
գլխաւորութեամբ:

Յեղապետը, որ կոչվում է «միր» (տէր), չէ նշա-
նակում ընտրողական սկզբունքներով. նա, որպէս ցեղի
նահապետը, սերումովից սերունդ, տիրում է ժառանգա-
րար: Ամբողջ ցեղը հապատակում է նրա իշխանութեանը՝
խոնարհ, որդիական հնագանդութեամբ. նրա սուրբ, նրա
ձեռքը, նրա կեանքը միշտ պատրաստ են ծառայելու
պետի կամքին և հաճոյքին, որքան և չար կամ բարբա-
րոսական լինին նրանք: Յեղապետն է վճռում իւր ժո-
ղովրդի վճերը, նա է բաժանում աւարը յափշտակող-
ների մէջ, նա է առաջնորդում իւր ցեղին կոուի ժամա-
նակ, նա է ուղարկում խմբերը աւարառութեան հա-
մար: Յեղապետն ամեն առաւօտ իւր չափի մէջ նստած,
ընդունում է ցեղի նշանաւոր տղամարդկանց, որոնք ի-
րանց զինուորական ամբողջ կազմուածքով, ներկայանում
են պետին՝ լսելու նրա պատուէները: Այնտեղ ծխում
են հիւրասիրութեան շիբուխը, խմում են մի-մի ֆինջան
դառն սուրճ: Եւ այդպիսի «սալամը» կատարվում է ա-
մեն առաւօտ իւր բոլոր ճշտութեամբ:

Իսկ շէյխերը նշանակվում են գլխաւոր գենապետից.
Նրանք ունին իրանց մուֆթիները և զագիները. Շէյխերը
կատարում են ցեղի կրօնական պահանջները, որպիսի են՝
ամուսնութիւն, թլփատութիւն և հրապարակական նա-

մազ: Իսկ կոխների մէջ նրանք մասնակցում են որպէս
զինուոր, բայց աւարառութիւնների մէջ՝ որպէս աւազակա-
պետ: Այսուամենայնիւ նրանք վայելում են ցեղի համա-
կրութիւնը նոյն չափով, որքան ջերմ է կրօնական
զգացմունքը մի պարզ և կիսավայրենի ժողովրդի մէջ,
ինչպիսին է քուրդը:

Տարօնի և Վասպուրականի ամբողջ նահանգները
բաժանուած են ըրդերի զմնազան ցեղերի մէջ: Իսկ
իւրաքանչիւր ցեղի մէջ երկրի բաժանմունքը՝ ամենախո-
շոր մասերից համուռմ է ամենափոքր մանրերոր-
դի: Այսինքն՝ սկսեալ մի գաւառից, մի փոքրիկ վիճա-
կից, և մինչև անգամ մի գիւղից, և մի ընտանիքից, իւ-
րաքանչիւրն առանձին-առանձին տէր ունի, և իւրա-
քանչիւր բաժինը հաւասարվում է տիրողի զօրութեան
բարձր կամ ստոր աստիճանին:

Ույան—հպատակը վճարում է այլ և այլ հարկեր
հողի մշակութեան համար, իւր անասունների համար, իւր
արհեստի համար, իւր ընակութեան տեղի համար, իւր
զվսի համար, մի խօսքով ամեն բանի համար, որ վե-
րաբերում են նրա կեանքի և ապրուստի անհրաժեշտու-
թիւններին: Հարկերի չափը և նրանց քանակութիւնը ոչ
կշու ունին և ոչ սահման. դա կախուած է առնողի
խղճմտանքից: Ույայի տէր լինելու և հարկեր պահանջե-
լու արտօնութիւն վայելոները կոչվում են խաֆիր կամ
դարարէյները: Դրանք ցեղի մէջ որեիցէ նշանակութիւն
ունեցող ազնուական մարդիկն են: Օրինակ՝ զլսաւոր
ցեղապետն ունի իւր ազգակիցները, կամ՝ պաշտօնակալ-
ները. դրանց ապրուստի համար տալիս է մի կամ աւե-
լի գիւղ, որոնց հասոյթով պէտք է կառավարումն նը-
րանք. այդպիսիներն ստանում են խափիրութեան իրա-
ւոնք: Նոյն իսկ պաշտօնակալները, կամ ցեղապետի ազ-

գակիցները ունին ծառաներ կամ սպասաւորներ, որոնց ոռնկի փոխարէն տալիս են իրանց ստացած գիւղերից մի կամ շատ ընտանիք որպէս ծուխ, և այդ ծառան վարվում է նոյն ընտանիքների հետ ինչպէս իւր սեպհականութեան կամ հալատակների հետ։ Ահա այդ է պատճառը, որ երկրի բաժանմունքը՝ սկսեալ ամենախոշոր կտորներից համում է մի ընտանիքի։

Որպէս իշխանութիւնը՝ սկսեալ ցեղապետից աստիճանաբար իջնում է մինչև զերջին սպասաւորը, նոյնպէս և սեպհականութեան իրաւոննքը՝ սկսեալ երկրի խոշոր կտորներից համում է ամենափոքր մասի։

Բայց երկիրը աղաների (խաֆիրների) տոհմային կամ կալուածական ժառանգութիւնը չէ, այլ նա սեպհականացուցած է սրի ուժով. այդ պատճառով նա անդադար անցնում է մի տիրապետողից միւսին, որի սուրն աւելի զօրութիւն է ստանում։

Եւ այդպէս՝ պատերազմը տիրողների մէջ դառնում է մշտական, անընդհատելի։

Պատերազմների ժամանակ իւրաքանչիւր հակառակ կողմերի՝ թէ յաղթութեան և թէ յաղթուելու միջոցին, ընակիչների վիճակը սարսափելի է։ Օրինակ՝ մի ցեղ կամենում է խլել միւս ցեղի ձեռքից երկրի այս կամ այն մասը. նա կամ յաղթելով տիրում է, կամ աւար առնելով ու թալանելով ամեն հանդիպածը, յետ է դառնում։ Այդպիսի դէպքերում ժողովուրդը թողնում է իւր տոննը, տեղը, ծալիած դաշտերն ու արտերը, և միայն իւր գլուխն աղատելու համար պատսպարփում է լեռների անմատչելի տեղերում։ Կոխուր տնում է երկար։ Անասունները, անտէր մնալով, թշնամին կողոպտում է։ Հունձը, անխնամ մնալով, չորանում, ոչնչանում է։

և այդ կոխուներից յետոյ վրայ է համնում մի նոր, ամենասարսափելի թշնամի—սովը։

Ժողովուրդը միշտ գտնվում է անվերջ երկիւղի և յուսահատութեան մէջ։ Նա չգիտէ, թէ վաղը կարմղ է հանգիստ լինել, որպէս նրա քամակին։ Կոխուների փոթորիկների մէջ եթէ մի անգամ զրկուեցան նրա մշակութիւնները բերքից, միւս օրը նա ուտելու հաց չունի։ Որովհետև նա ապագայի համար պաշար չէ պահում, նախ՝ ապահով տեղ չունի պահելու, երկրորդ՝ աւելորդ ծանրութիւնը միշտ արգելում է նրա փախուստը թշնամու ձեռքից, երբ նա աշխատում է ազատել իւր գլուխը միայն։

Կոխուները, ժողովրդի անգամար անցնելը մէկ տիրապետողից միւսին, սպառում են ընակիչների կեանքը սրով, կրակով ու սովով։

Յանկարծ երկրի նախկին տիրապետողն իրան յաղթուած է համարում, և որպէսզի նա յաղթողի համար շահուելու ոչնիչ չժողոնէ, հրգեհում է ամբողջ գիւղօրայք, աւերում է քաղաքները, կրակ է տալիս հասունացած արտերին, և բոլորովին անապատ դարձնելով երկիրը, որ պատկանում է իրան, այդպէս թողնում է և հեռանում։ Այդպիսի հանգամանքներում զուրդը կորցնելու ոչնիչ չունի, որովհետև նա մի ժամանակաւոր հիւր է. իսկ այդ բոլոր կրակի նիւթ դարձած շինութիւնները պատկանում են հայ կամ օտարազգի ընակիչներին. այն բոլոր մշակութիւնների արդիմաքերութիւնը նրանց ձեռքի վաստակն է։ Նոյն բարբարոսութեամբ է վարվում և յարձակուողը. երբ տեսնում է, թէ տիրելու անկարող է, նա խոյս է տալիս կուտի գաշտից, իւր յետքից թողնելով աւերակներ և ամայութիւն։

Ժողովուրդը միշտ գտնվում է նոյն դրութեան մէջ,

որպէս մի թռչուն, որի բոյնը քանդուած է չար երեխայի ձեռքով. նա նստած է միշտ օրօրուող տերեկի վրայ և չգիտէ ինչ անէ: Բնակիչը սիրո չունի կրկին նորոգելու իւր խրճիթը, որովհետեւ մտածում է՝ արդեօք երկար կարող է բնակուել նրա մէջ. սիրո չունի միւս անգամ ցանել իւր արտը, որովհետեւ յոյս չունի, թէ կըյացողուի իրան քաղել իւր արտը: Նրա տան շարժական իրեղէնները միշտ թագուած են լինում հողի մէջ, կամ նրանց համար յատուկ շինուած ստորերկրեայ պահարաններում, որպէսզի փախուստների ժամանակ թշնամու ձեռքը չընկնեն: Բայց յաջողվնում է նրան միւս անգամ՝ դուրս բերել իւր կայքը գերեզմանից, — խիստ հաղիւ, որովհետեւ շատ անդամ թագցնողը, հանդիպելով թշնամուն, զրկվում է կեանքից և իւր պահարանի գաղտնիքը տանում է դէպի միւս աշխարհը: Այդ է պատճառը, որ չայաստանում մինչև այսօր գետինը փորելու ժամանակ դժունվում են այնքան շատ պղնձէ, երկաթէ իրեղէններ, կանանց զարդեր. զրանք պատերազմների միջցներում թագցրած կայքեր են, որոնց տէրերն իրանց հետ իջել են գերեզման:

Այսպէս է հայի վիճակը Տարօնի և Վասպուրականի մէջ, նրա դժբախտութիւնն աւելի նրանումն է կայանում, որ տիրող բռնաւորը — քուրդը — երկրի տէրը չէ, այլ զանազան թափառական ցեղերից բաղկացած մի ամբոխ, որ կատաղի մրրկի նման, տարբերվում է երկրի մի կողմից դէպի միւսը՝ ոչնչացնելով ամեն կենդանութիւն, ամեն ինչ, որ արդինաբերել է արհեստը և մարդու աշխատասէր ձեռքը:

Քուրդը պետական փառասիրութիւն չունի, և ոչ հասկանալի է նրան աշխարհակալութեան հպարտութիւնը: Նա նայում է իւր նուաճած ժողովրդի վրայ, որպէս

այն սարերի խոտերի վրայ, ուր արածում են իւր անապունները: Մէկը — ժողովուրդը — մատակարարում է քրդի պիտոյքները, միւսը — սարերի խոտը ճարակ են տալիս նրա հօտերին. որպէս վերջինի աճեցնելու և մշակելու համար նա հոգ չէ տանում, նոյնպէս և ժողովուրդը խնամելու մասին նա չէ մտածում: Քուրդը վստահ է, թէ աշխարհի մէջ ամեն տեղ բաց է նրա ասպարէզը, ամեն տեղ կարող է գտնել այդ տեսակ արօտներ, քանի իւր սուրը կտրում է, քանի իւր թէկը շարժվում է:

Վասպուրականի և Տարօնի նահանգներում, բացի ներքին խոռովութիւններից քրդերի մէջ, լինում են և յարձակումներ արտաքին թշնամիններից: Քիչ չէ պատահում, որ այդպիսի արշաւանդներին պատերազմը վերջանում է կրակով, արիմով, գերեվարութեամբ և աւարառութեամբ: Այդպիսի դէպրերում վտանգը համնում է դարձեալ բնիկ ժողովրդին, որովհետեւ քրդերը, եթէ արտաքին թշնամուն ընդդիմանալու կարողութիւն չունին, թողնում են երկիրը, քաշվում դէպի լեռների անմատչելի տեղերը և սպասում մինչև թշնամու հեռանալը:

Քիչ չէ պատահում, որ Օսմանեան պետութիւնն զօրքեր է ուղարկում խաղաղայններու իւր տէրութեան սահմանագլուխները և նուաճելու ապստամբ քրդերին: Եւ տաճիկ զինուորը վարվում է նոյն բարբարոսութեամբ, ինչպէս պարսիկները: Որովհետեւ տաճիկի տիրապետելը կամ խաղաղ չէ յաջողվում, կամ եթէ յաջողվում է, մինում է ժամանակաւոր, և զինուորները՝ դադարկաձեռն յետ չդառնալու համար, յափշտակում են ամեն հանդիպածը:

Ահա, այսպիսի դրութեան մէջ են համարեա՝ Արդրումի, Բայազէդի, Հաղբակայ, Վանի, Բաղէչի, Մուշի, Ճատախու, Սամոնյ, Խիզանու, Մողաց, Զարսանչակի,

Քեղուայ—գաւառները, իրանց բազմաթիւ հայ բնակիչներով։ Նրանց տիրում է մի աւազակ ցեղ, որի աջ ձեռքը իւր սուրն է, ոտքերը՝ իւր նժոյզը, որի տունը իւր թեթև չաղըն է, որի հայրենիքը—ամեն տեղ, որի հոնճքը—թշուառ մարդկութիւնը, որի օրէնքն ու իրաւունքը—իւր կամքը, որի կեանքի նպատակը—փշքել, խորտակել և ոչնչացնել, որի գործող ոգին—իւր տմարդի սիրտը, վայրենի կատաղութիւնը և գաղանական յանդղնութիւնը...:

ՓԱԽՈՒՏՍԻՃԱՆԱԳԱՐՀՅԱ

Հեռագիրը մեղ լուր բերեց, թէ Բ. Դուռը իւր պատասխանի մէջ, որ հազորդած է Կ. Պօլսի եւրոպական դեսպաններին, խոստացաւ համոզել ալբանցիներին դիջանել Դուլցինիօն Զերնօգորիային, և պարտաւորվում է վճռել յունաց հարցը երկը ամսուայ մէջ, իսկ հայոց հարցը չորս ամսուայ մէջ։

Եյդ դարձեալ նոյն մժին, երկդիմի և նենդաւոր պատասխաններից մէկն է, որով Բ. Դուռը սովորութիւն ունի միշտ խոյս տալ եւրոպայի պահանջումների ուղղակի կատարելուց, փախուստի ճանապարհ գտնել, և նոր դժուարութիւններ, նոր արգելքներ սարքելու համար ժամանակ վաստակել։

Բ. Դուռը պարտաւորվում է հայոց խնդիրը չորս ամսուայ մէջ վճռել, բայց ի՞նչ կերպով, ի՞նչ ըեֆօրմներ պիտի մտցնէ չայաստանում, — այդ մասին Առում է։

Ի նկատի ունենալով թիւրքաց չայաստանում կատարուող այժմեան անցքերը, շատ հեշտ է նախագու-

շակել, թէ Բ. Դուռը այս չորս ամսուայ ընթացքում ինչ կերպով կը մտէ հայկական խնդիրը:

Նա կուղարկէ Հայաստան, ինչպէս առաջ, կամիսերներ, կուղարկէ Հօքարդ փաշայի նման բարեկարգիշներ, ցոյց կը տայ, թէ աշխատում է վերանորոգութիւններ մտցնել,—բայց միևնուն ժամանակ քրդերին, թիւրքերին և ամբողջ մահմեղական ամբոխը գաղտնի կերպով կը դրգովէ հայերի դէմ, և փոխանակ բարեկարգութիւնների, արին, կոտորած, աւերմունք կը տարածէ Հայաստանում։ Չորս ամիսը բաւական ժամանակ է այդ բոլորը կատարելու համար։

Եւ երբ Հայաստանը կը ծիսի արեան և կրակի մէջ, նա կը պատասխանէ Եւրոպային. իմ ժողովուրդը դեռ պատրաստ չէ. ես ամեն միջոցներ գործ դրեցի. Հայաստանում վերանորոգութիւններ մտցնելը առայժմ անհնարին է, որովհետեւ մահմեղական ամբոխի կրօնական զգացմունքը, թիւրքերի ազգային հաղարտութիւնը վիրաւրում է հայերին առանձնաշնորհումներ տալու պատճառով։

Խոստանալ և չկատարել—այդ Թիւրքիայի վաղեմի սովորութիւնն է։ Իսկ Բարիք Խոստանալ և չարը գործադրել—այդ պահանջում է նրա այժմեան ամենախարդախ քաղաքականութիւնը։

Հասկանալի է, որ Բ. Դուռը ամեն տեսակ հնարներ գործ պիտի դնէ, որ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը գործադրութիւն չգտնէ Հայաստանում։ Նա շատ լաւ հասկանում է, թէ այդ յօդուածը ինչ ապագայ է պատրաստում հայերի համար։

Հայաստան բառը Խիստ անախորժ տպաւրութիւն է գործում Թիւրքիայի ջղերի վրայ։ Բ. Դուռը բացարձակ կերպով յայտնեց հայտրիալիքին, թէ իւր պե-

տութեան մէջ Հայաստան անունով երկիր չէ ճանաչում. նա յայտնեց Կ. Պոլսի եւրոպական դեսպաններին, թէ Հայաստանում քացառաւպէս վերանորոգութիւններ մը տցնելու դիտաւորութիւն չունի, այլ պիտի մտցնէ ընդհանուր վերանորոգութիւններ ամբողջ Փոքր Ասիայի մէջ։ Ի՞նչ են նշանակում այդ խօսքերը։ Ճատ պարզ է, որ Բ. Դուռը չէ ցանկանում Հայաստանը դարձնել մի արտօնական երկիր, որպէսզի այդ երկիրը, իրեւ մի որոշ մարմին չառանձնանայ և չանցատուի իւր պետութիւնից։ Բայց անեան թերակիզու իշխանութիւնների կազմուելու պատմութիւնը, ի հարկէ, Թիւրքիան շուտով մօռանալ չէր կարող։

Չնայելով, որ հայերի նպատակը խիստ համեստ է, չնայելով, որ հայերը ցանկանում են ունենալ մի բարոք կառավարութիւն միայն և աղատուել մահմեղականների մինչև այսօր գործ դրած դարձուր բարբարութիւններից, այսու ամենայնիւ, Բ. Դուռը չէ կամենում կատարել նըրանց իրաւացի պահանջումները, որ ամեն մի փոքր իշատէ բարեկարգ պետութեան քաղաքացին իրաւունք ունի վայելելու։

Այդ բաւական չէ, (այժմ Թիւրքիան աշխատում է հայկական խնդիրը խեղտելու նովատակով ոչնչացնել հայտարը, Աշխատում է լցնել Հայաստանը քրդերով, չէրքեզներով, լազերով, աջարացներով և այդ բոլոր վայրենի ցեղերի բարբարութիւնը գրգռել հայերի դէմ։ Ուուսաց նոր նուաճած երկրներից գաղթող բազմաթիւ մահմեղականներին նա զետեղեց Հայաստանի մէջ։ Իսկ մահմեղականներին նա զետեղեց Հայաստանի մէջ։ Իսկ Եւրոպական Թիւրքիայից գուրս եկող գաղթականների խումբերը նոյնպէս ուղարկում է դէպի Հայաստան։)

Նպատակը յայտնի է և չորս ամիսը բաւական ձիգ ժամանակ է նրան իրավործելու համար...:
 Նշանները արդէն երկում են Վառպուրականի մէջ, որ չայաստանի սիրտն է, նկատվում է քրդերի կատաղի յուզմունք, այրվում են գիւղեր, սպանվում են մարդիկ և ասպատակութիւնը օրստօրէ աւելի ընդարձակվում է, աւելի սպառնական ձև է ստանում։ Տարօնի նահանգում նոյնալէս արին է հոսում։ Սօվուղբուկախի գաւառում Շէյս-Իրադուլլահը, իւր գլխին հաւաքած աւելի քան տասն հազար աւագակներ, վըտանգ է սպառնում Ատրպատականի հայերին։ Հեքարի կողմերում Բահրի-Բէկը, իւր ցեղի գլուխն անցած, աւերմունքներ է գործում։ Հին-Բայազէդի կողմերում Հէյդարանի քրդերը կողոպտում են հայերին։ Ամեն տեղ նկատվում են միենոյն շարագործութիւնները, որոնց կեղմի տակ թագնուած է թուրք կառավարութեան պաշտօնատարների նենգաւոր ձեռքը։ Իսկ Կ. Պօլսի մահմեդական մամուլը այդ բոլոր բարբարոսութիւնները բացատրում է քրդական միութեան անունով...:

Ինչպէս պիտի վարուեն Թիւրքիայի հայերը վերոյիշեալ բոլոր շարագործութիւնների դէմ։

Թիւրքիայի հայերը մինչև այսօր իրանց բոլոր յոյսը գրել էին դիւնագիտական բանակցութիւնների վրայ, ամեն ինչ սպասում էին Եւրոպայից և իրանց փրկութիւնը միայն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի մէջ էին որոնում։ Բայց Անգլիայի պետական մարդիկներից մէկը, միստր Բրայս, այս օրերում (1880 թուին) խիստ ճիշտ կերպով նկատեց Կ. Պօլսի հայերին. «աշխատեցէք չձանձրացնել Եւրոպային»...։

Մենք կաւելացնենք հայասէր անգլիացու խօս-

քերին, ոչ թէ Եւրոպան, այլ Աստուած ինքը չի օգնի Թիւրքիայի հայերին, եթէ նրանք ինքները իրանց օգնելու մէջ ծոյլ կըլինին...։

Թիւրքիան խոստանում է վճռել հայոց հարցը չորս ամսուայ մէջ։ Գուցէ վճիռը նրանով կըլերջանայ, որ չորս ամսից յետոյ էլ չայաստանում հայ չի մնայ...։

Ները արդէն միացել են ընդունելով «Միացեալ ընկերութիւնը» անունը:

Այժմ ինչ է մնում մեղ անել:

Այժմ մնում է մեղ կրիսպատկել մեր բարեգործական եռանդը, և մեր նիւթական գոհաբերութիւններով միացեալ ընկերութիւններին ուժ և խրախոյս տալ:

Մեզանից ամեն մէկը համոզուած է, որ ուսումք, կրթութիւնը, ամենազլիսաւոր միջոցներն են, որոնք, թէս փոքր ինչ ուշ, թէս դանդաղ կերպով, բայց վերջապէս կըհարթեն աւելի հիմնաւոր ճանապարհ տաճկահայերի առջև մի ապագայ բարօրութեան հասնելու համար։ Մենք համոզուած ենք, որ Թիւրքիայի հայը դպրոցի մէջ պիտի գտնէ իւր վերածնութիւնը, իւր բախտը։ Եւ այն բարիքները, որոնցից մինչև այսօր դրկել էր հային բարբարոս Թիւրքիան, — այն բարիքները, որ եւրոպական դիմումատիան այնքան ժլատութեամբ է բաժանում հայերին, — հայի որդիները պիտի ստանան դպրոցական վարժապետի ձեռքից։

Բայց Թիւրքիայի հայը աղքատ է։ Թիւրքաց հարստանարութիւնը այն աստիճան քամել է նրա նիւթական զօրութիւնը, որ նա հազիւ թէ կարող է իւր դպրոցները կանոնաւոր, նպատակայարմար կերպով առաջ տանել, եթէ դրսից օգնութիւն չլինի։

Ռուսաստանի հայերը այժմ պէտք է կատարեն տաճկահայերի վերաբերութեամբ նոյնը, ինչ որ մի ժամանակ իրանց ոսկիներով անում էին Հնդկաստանի հայերը ամբողջ ազգի համար։ Ռուսաստանի հայերը, ընակուելով մի բարեկարգ պետութեան հովանաւորութեան ներքոյ, նիւթապէս աւելի բարեբախտ վիճակի մէջ են գտնվում, քան իրանց տաճկահայատակ եղբայրները։

Հնդկաստանի հայերը թողեցին ազգի համար խոշոր

Երբ Կ. Պօլսում կազմուեցան զանազան ընկերութիւններ՝ «Արարատեան», «Կիլիկեան», «Թպրոցամիրաց արևելեան» — Հայաստանում ուսումնական տարածելու նպատակով, մեզանից շատերը սկսեցին մտածել՝ ինչ հարկաւոր են այսքան ընկերութիւններ, միթէ նպատակը մինոյնը չէ, աւելի լաւ չէր լինի եթէ բոլորը միանային, կազմէին մի ամբողջ և աւելի հիմնաւոր ընկերութիւն։

Մտածութիւնները իրաւացի էին։ Ընկերութիւնները կազմուած էին բարեգործական հիմունքների վրայ և պիտի պահպանուէին նուիրատութիւններով։ Բայց մեր հասարակութիւնը չգիտէր որ մէկին նուիրել իւր հանգանակութիւնները։ Բոլորը միմեյն ասպարէզում, բոլորը մինոյն նպատակի համար էին գործում։

Կ. Պօլսի հայերը, որոնք աւելի մեծ յոյսեր, աւելի մեծ ակնկալութիւններ ունին մեզանից, ուստահայերից, — իհարկէ նիւթական օժանդակութիւնների կողմից, — ընկերութիւնների միացնելու հարցի մէջ ոչ միայն մեղ հետ համաձայն գտնուեցան այլ լիապէս կատարեցին մեր փափը. մամուլի մէջ հրատարակուեցաւ որ ընկերութիւն-

կտակներ, նրանց փողերով զանազան երկրներում հիմնուեցան բազմաթիւ դպրոցներ: Ցանկալի կը լինէր, որ մենք հետևէինք նրանց օրինակին: Բայց մեր պահանջը համեստէ, մենք խոշոր կտակներ չենք պահանջում:

Մեղանից ոչ մէկի տնտեսութեան մէջ մի զգալի փոփոխութիւն չէր լինի, եթէ մեզ վրայ բարոյական պարտք կը զնիք իւրաքանչիւր տարի շարունակ կերպով, մեր կարողութեան համեմատ, մի քանի բուբլ նուիրել Կ. Պոլսի միացեալ ընկերութիւններին: Այդ բուբլներից կը կազմուէին նշանաւոր գումարներ:

Ուստաստանի հայերը «Արարատեան» ընկերութեան վերաբերութեամբ ցոյց տուեցին իրանց բարեգործական եռանդը, թէ որքան համարում են կրթութեան գործին տաճկական չայաստանում: Ցոյս ունիք, որ այժմ աւելի ևս պիտի բազմապատկեն իրանց զոհաբերութիւնները, երբ մասնաւոր ընկերութիւններից կազմուել է մի հոյակալ, հիմնաւոր ընկերութիւն:

Քրիստոնեաների ազատութեան անունով ծագեց ուստի թուրքական պատերազմը, և հայերը կարմիր արեան փոխարէն ու մելանը գործածելով, ստացած Սան-Ստեֆանօյի 16 և Բերլինի աւագաժողովի 61-րդ յօդուածները: Վերջին յօդուածի տրամադրութեան համեմատ, Թուրքիան պարտաւորվում էր վերանորոգութիւններ մըտցնել իւր պետութեան «հայերով բնակեցրած գաւառների մէջ»: Այստեղից ինքն ըստինքեան ծագեց մի հարց.— մվեր են հայերը:

Մեր հին ազգասէրների կարծիքով հայեր միայն լուսաւորչականներն էին, և Թիւրքիան բարոր համա-

րեց այսպէս ընդունել, հաշուեց լուսաւորչականների թիւը, այն ևս փոքրացնելով, և պատասխանեց Եւրոպային, թէ իմ պետութեան մէջ հայերը այնքան չնչին փոքրամասնութիւն են կազմում, որ չարժէ մինչև անդամներանց համար առանձին վերանորոգութիւններ անել: Պատասխանը, կրօնական կէտից, մասսամբ ճիշտ էր, և մեզանից ոչոք իրաւումք չունի մեղադրել Թիւրքիային, երբ նա օգուտ է քաղում մեր տգիտութիւնից, երբ նա կրկնում է մինոյնը, ինչ որ մենք հնք ասում,— թէ բացի լուսաւորչականներից ուրիշ հայ չկայ:

«Մշակը» նախատեսում էր այդ բոլորը, նա գիտէր, թէ որպիսի կորստաբեր հետևանքներ կարող է ունենալ չայաստանի վերանորոգութեան մասին, երբ մենք կը շարունակնք անդադար կրկնել, թէ լուսաւորչական եկեղեցուց դուրս հայութիւն չկայ: Եւ այդ իսկ պատճառով,

«Մշակը» բարձրացրեց կրօնի և ազգութեան խնդիրը:

Բերլինի յանձնաժողովի 61-րդ յօդուածը տուեց հայերին երկու արտօնութիւնն, առաջին, որ չայաստանում պէտք է վերանորոգութիւններ մտցնուէին, երկրորդ, որ հայէրը կրօնական համայնքից Եւրոպայի առջև ճանաչուեցան որպէս ազգ:

Ի՞նչ է նշանակում կրօնական համայնքից ճանաչուեցան որպէս ազգ:— Այդ նշանակում է՝ մի ցեղական ամբողջութիւն, որի մէջ կան և կարող են լինել զանազան կրօններ և եկեղեցիներ:

Այդ կոչմանը արժանի լինելու համար, պէտք էր ցոյց տալ, որ դա իսկապէս այդպէս է, որ մենք ազգ ենք, և այդ ազգի մէջ կան զանազան եկեղեցիներ, — լուսաւորչական, բողոքական, կաթոլիկ, յունադաւան և մահմեղական: Եւ այդ կազմակերպութիւնից ինքն ըստինքեան պէտք է առաջ գար կրօնական ներողամնու-

թիւնը և համոզիւնքի ազատութիւնը, որպէս զի աղ-
գային միութեան գործը կատարեալ լինէր:

«Մշակը», որ շատ առաջ քարողում էր այդ ցանկալի միութիւնը, Բերլինի գաշնազրից յետոյ աւելի եռանդով սկսեց արծարծել նրան, որովհետև այդ միութեան մէջն էր տեսնում ազգի փրկութիւնը և Հայաստանի բախտն ու ապագան։ Բայց գտնուեցան մարդիկ, որ սկսեցին հակառակը քարողել, կամ մեր բռնած ընթացքը ծուռ ու սխալ կերպով բացատրել։ Մենք այդպիսիների հետ գործ չունինք, մեր գործը մեր ազգի բարեմիտների հետ է։ Մենք անդադար պիտի մտրակենք այն շարագործներին, — թէ կաթոլիկ լինէին, թէ լուսաւորչական, թէ բողոքական, թէ յունադաւան և թէ մահմեդական, — որոնք կրօնի պատճառով մեր ազգի միութեան գործի մէջ երկարառակութիւն են ձգում։ Եւ մենք սիրով կը համբռուենք մեր այն եղբայրներին, առանց դիպչելու նըրանց կրօնին, որոնք միայն հայութեան և Հայաստանի անունով կրգործեն, և հայ ազգի շահերը կըսլաշտպանեն։

Մենք մէկ ազգի որդիներ ենք, մենք մինչոյն ըստ
տանիքի զաւակներ ենք: Կրօնը, որ մի ժամանակ բաժա-
նել էր մեզ, այժմ ազգի և հայրենիքի սէրը պէտք է
միացնէ: Կաթոլիկութիւնը, բողոքականութիւնը և մինչև
անգամ մահմեղականութիւնը չեն զրկում հային հայ լի-
նելուց,—և ոչ էլ լուսառչականութիւնը մեզ իրաւունք
է տալիս հայ կոչուել: Մենք հայ էինք, երբ հեթանոս
էինք, և հայ կըմանք, երբ հազար անգամ կըփոխենք
մեր կրօնը: Մեր ազգութիւնը չի կորչի, —երբ պահպա-
նուած կըլինին այդ բոլոր պայմանները, ինչ որ պէտք
են, ինչ որ անհրաժեշտ են մի ազգի գոյութեան հա-
մար:

Laju bñ intiutL

ՐԱՖՖԻՒ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

- | | | | |
|-----|---|---|----|
| 1. | Հայ կինը և Հայ երիտասարդութիւնը (սպառ.) | 1 | 50 |
| 2. | Խենթ և Զալալէդիլին, երկուսը մէկ գըքի մէջ ամփոփուած | 2 | 50 |
| 3. | Դաւիթթ-բէկ, հ. I, Ա և ԻII վերջաբանով (սպառ.) | 3 | — |
| 4. | Մինն այսպէս, միւսն այնպէս (պատկերազարդ) | 1 | — |
| 5. | Կայծեր, հ. Ա., երկորդ տպագրութիւն | 2 | — |
| 6. | Կայծերի վերջը (սպառուած) | — | 50 |
| 7. | Վէպիկներ և պատկերներ, հ. Ա. | 2 | — |
| 8. | Վէպիկներ և պատկերներ հ. Ա. | 2 | — |
| 9. | Արծիւ Վասպուրականի | — | 70 |
| 10. | Խամսայի մելիքութիւնները, երկորդ տպագր. | | |
| 11. | Զահրումար | 2 | — |
| 12. | Տաճկահայք | — | 50 |
| 13. | Խաչպատի յիշատակարանը | 2 | 50 |

Հետզհետէ լոյս կըտեսնեն

ԲԱԳԻՔԻ ՀԵՏԵԽԵԱԼ ԱՃԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ

1. Վահագներ և պատկերներ, հ. Գ.
2. Բանաստեղծութիւններ (տպուած և անտիպ), երկու հատոր.
3. Ճանապարհորդութիւններ, որոնց մի մասը տպուել է «Փորձի» և «Մշակի», մէջ, իսկ միւս մասն անտիպ է.
4. Ազգային համառօտ պատմութիւն՝ Հայկեց մինչև Լեռն Զ.
5. Ընդհանուր պատմութիւն (թարգմ.)
6. Նամակներ.
7. Սալբի (անտիպ աշխատութիւն), Ա. հատոր.
8. — — — Բ. հատոր.
9. — — — Գ. հատոր.
10. Հրապարակխօսութիւն (տպուած և անտիպ).
11. Գննադատութիւններ (տպուած և անտիպ).



